

# Հոգեգալստականության և Լեզուների Խոսելու Աղանդը



**Հոգեգալստականության  
և Լեզուների Խոսելու Աղանդը**

**Վերլուծական եւ Ջատագովական Թուղթ**

**Հեղինակությամբ  
Տ. Սերոբ Քահանա Ազարեանի**

Չոն

Մեր Դարավոր Հավատքի

Հերոս Սրբերին

## Հեղինակի կոսսք

Չգո՛յ՛ եղէք սուտ մարգարէներից, որոնք մօտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից յափշտակող գայլեր են:

Քրիստոնէութիւնը իր ծննդեան օրէն իսկ ունեցաւ իր տիրահռչակ աղանդաւորական շարժումները, որոնք ծագեցան զանազան շարժառիթներով եւ որոմ ցանեցին հաւատացեալներու սրտերուն ու հոգիներուն մէջ: Այդ իսկ պատճառով, Եկեղեցին ստիպուեցաւ հաւատքի իր քարոզչութեան կողքին՝ պայքարիլ նաեւ այդ մութ ուժերուն եւ երեւոյթներուն դէմ:

Այժմ Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին, այլ հերետիկոսութեանց եւ աղանդներու կողքին կը գտնենք նորելուկ հերետիկոսութիւն մը որ տարբեր է իր դաւանանքով ուրիշ աղանդներէ: Հոգեգալստականներ եւ մանաւանդ «Կյանքի ՈՍՈՔ» կոչուած աղանդը Հայաստանի մէջ մարդորսութեամբ կը զբաղուին երկհազարամեայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ զաւակները մոլորեցնելով՝ հաւատքէ հեռացնելու, եւ կը փորձեն հաւատքով տկար անձանց ուղեղի լուացում կատարել, լեզուներ խօսելու, բեմադրական «հրաշքներ» գործելու, եւ իրենց աղանդին կաշկանդեալ եւ հլու անդամը դարձնելու համար:

Բնականաբար, բոլոր որոմ ցանողներուն դէմ պիտի գտնուէին մարդիկ, որոնք պիտի պատնէչ կանգնէին անոնց հերետիկոսութեանց եւ աղանդաւորական ակելիչ գործունէութեանց դէմ, եւ Քրիստոսի առակով՝ տեղ տային մաքուր արտերու մէջ ցանուած ցորենին, որ պիտի պարգեւէ կարգ մը տեղեր երեսուն, այլ տեղեր՝ վաթսուն, եւ այլ տեղեր՝ հարիւր:

Այս վտանգին առաջքը առնելու համար, մեծագոյն մտահոգութեամբ եւ նուիրումով յանձն առի անգլերէն լեզուով հեղինակել այս գիրքը 2010ին, երբ որպէս հոգեւոր հովիւ՝ կը ծառայէի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմէն ներս, ցոյց տալու համար թէ որքա՛ն սխալ են անոնք, որոնք կը ժպտին ուրանալ Աստուածաշունչի լուսատու ճշմարտութիւնները եւ ծամածռել ու աղաւաղել անոր բովանդակալից եւ կենսատու խօսքերը: Ուրախ եմ որ անոր անգլերէն բնագիր տարբերակը մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ հոն՝ ուր կարիքը կը զգացուէր այս տեսակ գիրքի ու աշխատանքի մը:

Քանի որ այս աշխատանքին կարիքը առաւելագոյնս պիտի զգացուէր Հայաստանի մէջ, պարտականութիւն սեպեցի գիրքս թարգմանել արեւելահայերէնի եւ արեւեան ուղղադրութեամբ, որպէսզի առաւել եւս մատչելի դառնայ անոր ընթերցումը եւ տարածումը հայրենի ժողովուրդին:

Գիրքս ունի երկու տառատեսակներ, որոնցմէ մին գիրքը պարունակող նիւթերն են, իսկ միւսը Աստուածաշունչէն կատարուած մէջբերումները, որպէսզի ակելի դիւրին դառնայ անոր ընթերցումը եւ բովանդակութեան համեմատութիւնը Աստուածաշունչի ցանկացած թարգմանութեան հետ: Աստուածաշունչի մէջբերումներուն համար օգտագործած եմ Մայր Աթոռի կողմէ հրատարակուած Արեւելահայերէն Աստուածաշունչի տարբերակը, որ բնականաբար ունի դասական ուղղագրութիւնը: Կարգ մը համարներ եւ նախադասութիւններ մզացուած են, որպէսզի հասկնալի դառնայ նախադասութեանց մէջ կատարուած իմաստային շեշտադրումը:

Շնորհակալութեան խօսք ունիմ Հայաստանի մէջ Քայքայիչ պաշտամունքներից տուժածների վերականգնողական կենտրոնի տնօրէն, Ալեքսանդր Ամարյանին իր մասնագիտական լրացուցիչ աշխատանքներուն ու քաջալերանքին համար:

Շնորհակալութեան անգնահատելի ու մեծ խօսք ունիմ հայրենանուէր ու խոստովանալից երիտասարդ բանաստեղծ՝ Դաւիթ Ասատրեանին, իր քաջալերանքին եւ անվերապահ աջակցութեան համար: Շնորհակալութեան մեծ բաժին կը յատկացնեմ սիրելի երէցկնոջ՝ Նաիրահին, որ ուրախութեամբ կատարեց արեւելահայերէնի սրբագրութիւնները եւ տուաւ իր բոլոր շինիչ թելադրանքները:

Վստահ եմ որ այս գիրքը իր աստուածաբանական խորիմաստ էջերով, փոփոխութիւն պիտի յառաջացնէ մեր ժողովուրդի հոգեւորական եւ աշխարհական դասերէն ներս, քաջալերելով եւ զօրացնելով մեր հաւատքի ջատագովականը ընդդէմ այս օտարամուտ եւ ստաբարոյ աղանդին: Որպէս նուիրեալ հոգեւորական Քրիստոսի՝ նպատակս է վառ պահել մեր եկեղեցւոյ հազարամեակներու ջահը մեր ժողովուրդին սրտերուն մէջ, եւ տարածել մեր սուրբ հաւատքը մեր ժողովուրդին մտքերուն ու հոգիներուն մէջ, որպէս արի եւ իմաստուն հետեւորդները մեր բոլոր դարաւոր սուրբերուն, որոնց կը նուիրեմ սոյն հերթական աշխատանքս:

Մեզ կը մնայ կարդալ, հասկնալ ու տարածել այս գիրքը տուներէ եւ աշխատատեղիներէ ներս: Առանց վախի պաշտպանել մեր սուրբ հաւատքը բոլոր տեսակի սուտ եւ պատեհապաշտ աղանդաւորականներէ ու անոնց դարձնել մեր Սուրբ Եկեղեցւոյ անդամները: Այս բոլորի կողքին, մի մոռնաք սիրել զմիմեանս, եւ տարածել մեր հաւատքը սիրոյ եւ նուիրումի բարձրագոյն օրինակով, տիպար դառնալով մեր շրջապատին եւ ժողովուրդին:

Թող փառաւորուի մեր հայրերու սուրբ հոգիները Աստուծոյ Արքայութեան մէջ, եւ այնպէս ըլլայ որ բոլորս ընթանանք անոնց փառաւոր ու լուսաշող ճանապարհներով: Որպէս հոգեւոր քահանայ, կը մնամ ձեր բոլորին սրտագին աղօթքներուն կարօտ:

**S. Սերոբ Քահանայ Ազարեան**  
**Լաս Վեգաս, ՆՎ, ԱՄՆ**

[www.hygradaran.weebly.com](http://www.hygradaran.weebly.com)

## Մուտք

Սովետական Կայսրության անկման հաջորդող երկու տասնամյակների ընթացքում, նախկին խորհրդային ժողովուրդները ստացան ու ապրեցին կրօնական այն ազատությունը, որին արժանավորապես սպասում էին: Միևնույն ժամանակ սակայն, նրանք դարձան անվերջ թիրախը արևմտյան երկրներից արտադրված աղանդների և հերետիկոսությունների, ինչպիսին են Եհովայի Վկաները, Մորմոնները, Շաբաթապահները, Հարի Քրիշնայականները, Պենտեկոստականները և այլն:

Այդ հերետիկոսական և աղանդավորական շարժումներից մեկը, որ հայտնվեց ու փորձանք դարձավ Արևելյան Եվրոպայի և Եվրասիական նորանկախ երկրների ավանդական Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիները վերագտնող հավատացյալների համար՝ Պենտեկոստական կամ Հոգեգալստական կամ Հիսունական շարժումն էր, իր զանազան անուններով և տարբերակներով: Հայերի մեծամասնությունը տակավին չվերագտած իրենց հարազատ Առաքելական Մայր Եկեղեցու հավատքը, սկսեցին տեսնել մարդիկ, որոնք հայտնվեցին աշխարհի չորս ծագերից այս ժողովրդներին ավետարանելու «միակ ճշմարտությունը», չմոռանալով ցանել անմիաբանության և հերետիկոսության որոմները Հայ ժողովրդի մեջ՝ որ իր կամքին հակառակ, ավելի քան յոթ տասնամյակներ շարունակ գրկվել էր Մայր Առաքելական Եկեղեցու ճշմարիտ հավատքից, Աթեիստ Կոմունիզմի պատճառով:

### 1. Ի՞նչ է Պենտեկոստալիզմը կամ Հոգեգալստականությունը

Պենտեկոստալիզմը կամ Հոգեգալստականությունը մի շարժում է, որ շեշտում է լեզուներ խոսելու կարևորությունը որպես «երկրորդ օրհնություն»: Նրանք քարոզում են թե՛ մարդիկ ստանում են Սուրբ Հոգին երբ դարձի են գալիս, սակայն լցվում են կամ մկրտվում Սուրբ Հոգով եւ սկսում են լեզուներ խոսել: Նրանք Ամերիկյան քրիստոնյական անջատողական խումբ էին, որ քսաներորդ դարի սկզբում անջատվեցին «Սրբության Շարժում» կոչված խմբից, այլ աղանդավորական շարժումների հետ մեկտեղ: Պենտեկոստական շարժման գլխավոր երկու դեմքերն եղել են, Չարլզ Պարհամը (1873-1929), որը եղել է հիմնադիրը Բեթել Աստվածաշնչի Քոլեջի, Կանգաս Նահանգի Տոպեկա քաղաքում. եւ Վիլիյամ Սիմորը (1870-1922), Սրբության շարժման հետևորդ, սևամորթ մի քարոզիչ, Լուիզիանա Նահանգից:

### 2. Ո՞վ էր Չարլզ Պարհամը

Պարհամը ծնվել է Այվա Նահանգի Մըսկըթին քաղաքում 1873-ին: Երիտասարդ տարիքում զգալով քարոզելու իր ունակությունները, նա մխրճվել է իր օրերին գոյություն ունեցող զանազան կրօնական շարժումների մեջ, ինչպիսիք են Սրբություն և Աստվածային Բժշկություն շարժումները:

1898-ին Պարհամը հիմնում է Բեթել Բժշկության Տունը, Կանգասի Տոպեկա քաղաքում՝ որպես մի ընդունարան նրանց համար, որոնք փնտրում էին երկնային բուժում: Կարճ ժամանակ հետո, նա անցնում է սովորելու «Սուրբ Հոգի և Մենք» Աստվածաշնչի

Դպրոցում, Մեյն Նահանգի Շայլո քաղաքում, ուր նա ականատես է լինում զանազան դեպքերի՝ ուր միսիոնարներ խոսում են լեզուներով (Գլոստլայա):



Պարհամը համոզվում է, որ Քրիստոսի վերադարձի Նախահազարամյակի շեմին, տեղի է ունենալու համաշխարհային հոգևոր զարթոնք և Սուրբ Հոգու հեղում: Գլոստլայան պիտի լինի նշան, որ Սուրբ Հոգին պետք է զորացնի այս զարթոնքը, և միսիոնարական մեծ գործեր տեղի ունենան: Դրա համար, նա համոզվում է որ Առաքելական դարից տրված Սուրբ Հոգու պարզները նաև գոյություն ունեն և մատչելի են քրիստոնյաներին ներկա ժամանակներում: 1900 թվականին, նա Աստվածաշնչի Դպրոց է բացում Բեթելում, ուր իր աշակերտներին սովորեցնում է զննել Աստվածաշունչը և մասնավորապես Գործք Առաքելոցի 2-րդ գլուխը, որպեսզի սովորեն Հոգևոր մկրտության մասին որպես աստվածաշնչյան նշան: Եւ ահա, Հունվար 1, 1901-ին **(նկատել թվականը)**, նրա աշակերտներից մեկը՝ Ազնես Օզմանը, սկսում է

անձանոթ լեզվով խոսել: Մի քանի օրից, դպրոցի աշակերտների կեսը սկսում են խոսել նույնպես: Ու եզրակացվում է որ լեզուների խոսակցությունը ապացույց էր, որ անձը մկրտվում է Սուրբ Հոգով, և հետևաբար սա լինում է նրանց բնորոշող վարդապետությունը, զանազանվելով Սրբություն կոչվող խմբերից:

Պարհամը այլևս սկսում է իր պատգամները ուղղել «առաքելական հավատք» ինքնադիր տիտղոսներով, ինչպես սիրում էր ասել: Ժողովրդի ու կրոնական առաջնորդների մեծ մասի կողմից նա հանդիպում է հակառակության և բացարձակ մերժման: Սակայն իր գործունեությունը տանելով ընդհանրապես Սրբություն և Բժշկություն շարժման լսողների շրջանակում, նա սկսում է հետևորդներ շահել:

1905 թվականին նա հիմնում է Աստվածաշնչի մի դպրոց Հյուսթըն քաղաքում, քարոզիչներ պատրաստելու, որ տարածեն իր «առաքելական հավատք»ի եկեղեցիները: Վիլիյամ Սիմորը՝ սևամորթ մի քարոզիչ և հետագա առաջնորդը Լոս Անջելեսի Ազուսա փողոցի Զարթոնք ժողովարանի (պատկերը), ներկա է գտնվում տասը շաբաթ տևող պատրաստության նիստերին և տանում է Պենտեկոստական պատգամը դեպի արևմուտք:



Այս պատճառով, նրա փորձառությունները դիտվում են որպես նորօրյա Հոգեգալստական շարժման սկիզբը: Հինգ տարի հետո, Սիմորը՝ որը ուսում էր ստանում Պարհամից Բեթելում, զարթոնքի նոր ալիք է առաջնորդում Ազուսա փողոցի իր ժողովարանում, որը տևում է մի քանի ամիս: Սա հանդիսանում է հիմնաքարը, որ Պենտեկոստական շարժումը սկսվի տարածվել Ամերիկայում: Պենտեկոստական դոկտրինը (վարդապետությունը) նաև այս շրջանում սկսվում է ձանաչվել որպես 'FULL GOSPEL' «Ամբողջական Ավետարան» կամ 'FOUR SQUARE GOSPEL' «Չորս Քառակուսի Ավետարան», որ

շեշտում էր թե Քրիստոսի ծառայությունը կարելի է դիտել չորս ծավալածքով. Քրիստոս Փրկիչը, Սրբագործողը, Բուժիչը և Եկող Թագավորը:

Չնայած որ Պենտեկոստական Շարժումը սկսվում է Պարիսում, նա շուտով կորցնում է իր ղեկավարող դիրքը ուրիշներին, ովքեր իրենց ձեռքում են վերցնում այդ: Նրան չի հաջողվում նորից դառնալ առաջնորդ այն շարժման որ հիմնել էր: Սրան ավելանում է սոդոմականության մի միջադեպ 1907-ին, որը գալիս է վերջնականապես քանդելու իր վերջին հույսերը վերադառնալու իր առաջորդող դիրքին: Այդ ժամանակից մինչև իր մահը 1929-ին, Պարիսում իր ժամանակի մեծ մասը անցկացնում է հարաճող Պենտեկոստական շարժումից դուրս:

Պենտեկոստական կամ «խարիզմատիկ» շարժման այսպես կոչված եկեղեցիներից որ ծլում և բազմանում են հետևյալներն են:

- Աստծո ժողովները կամ Աստծո Ասամբլյան Assemblies of God.
- Պենտեկոստական Եկեղեցիներ Pentecostal Churches.
- Անկախ Պենտեկոստական Եկեղեցիներ Independent Pentecostal Churches.
- Ամբողջական Ավետարանի Եկեղեցիներ Full Gospel Churches.
- Չորս-Քառակուսի Ավետարանի Եկեղեցիներ Four-Square Gospel Churches.
- Միացյալ Պենտեկոստական Եկեղեցիներ կամ Միայն Հիսուս Եկեղեցին (որն ի դեպ ուրանում է Սուրբ Երրորդությունը) United Pentecostal Churches, or 'Jesus Only'.
- Աստծո Եկեղեցիները (Քլիվլենդ, Թենեսիում) իր մոտ 890,000 աղանդավորականներով 1999-ին, Churches of God (Cleveland, Tennessee).
- Աստծո Մարգարեության Եկեղեցի Church of God of Prophecy.
- Առաքելական Հավատքի Եկեղեցի Apostolic Faith Churches.
- Քրիստոսով Աստծո Եկեղեցի Church of God in Christ.
- Էլիմի Ընկերակցության Եկեղեցիները Elim Fellowship Churches.
- Այգիի Միջազգային Եկեղեցիները, որը հետզհետե ստեղծում է Խոստումներ Պահողների Շարժումը, Ապրող Աստծո Եկեղեցին եւ այլն: Vineyard Churches International (The Promise Keepers Movement; Church of the Living God, and others).

### 3. Ի՞նչ են Աստծո ժողովները կամ Ասամբլյաները

Աստծո ժողովներ կամ Ասամբլյաներ կոչված շարժումը հիմնվել է 1914-ին, երբ մի խումբ խարիզմատիկ «եկեղեցիներ» միանում են Հաթ Սպրինգզ, Արքոնսաս Նահանգում: Աստծո ժողովները անջատվում է Սրբություն Եկեղեցիներից, որովհետև նրանք հավատում են, ինչպես այլ Հոգեգալստական եկեղեցիներ՝ որ Սուրբ Հոգու մկրտությունը վկայվում է միայն լեզուներ խոսելով: Աստծո ժողովները իրենց աստվածաբանությամբ ոչ- Կալվինական են (Մարդ փրկությունից կարող է ընկնել կամ դուրս գալ), և Պենտեկոստական են իրենց վարդապետությամբ, (Լեզուներ խոսել, աստվածային բուժում, կին հոգևորականներ, Սուրբ Հոգով «մորթվող»ներ, և այլն):



Նրանք շատ էկումենիկ են իրենց արտաքին հարաբերությունների և փոխ գործակցությունների մեջ: Քաջալերում են Աստվածաշնչի արդի թարգմանությունները, և ի տարբերություն Սրբության Շարժման իրենց նախորդներից՝ չունեն խիստ օրենքներ զգեստի, կանանց մազերի հարդարման կամ շպարման վերաբերյալ և այլն:

Հոգեգալստականությունը նաև հավատում է, որ մարդիկ այսօր կարող են ունենալ նույն իշխանությունն ու պարզևները, որ ունեին ժամանակին Քրիստոսի Առաքյալները: **Բենի Հինն** ու մնացյալ բոլոր այդ «բժշկող»ները տիպարներն են այսօրվա հոգեգալստական առաջնորդներին: Դա սկսել է **Ա. Ա. Ալենից, Օրալ Ռոբերտսից** մինչև **Մորիս Սերուլո** և բոլոր մյուսները.. **Ջիմ և Թամի Բեյքըր**ներն ու **Ջիմի Սվազգերտը** (որը բռնվել է մի քանի անգամ պոռնկության մեջ): Նա մի «վառ օրինակն» էր այդ տեսակ խաբեբաների: Հեռուստացույցով «ավետարանել» այն զարտուղի գաղափարը թե նրանք կարող են անել այն՝ ինչ անում էին Առաքյալները, իբրև թե նրանք բժշկելու ուժ ունեն և հիվանդությունները մարմնից հեռացնելու կարողություն:



Ուղիղ եթեր հեռարձակվող հեռուստացույցով, մարդիկ նայում են **Բենի Հիննին որ ասում է**. «Եթե ունեք մի մարդ ձեր ընտանիքում որ նոր է մահացել, բերեք մարմինը նստասենյակ, դրէք նրան հեռուստացույցի վրա և իր թևերը փաթաթեք հեռուստացույցին, որովհետև Աստված ինձ պիտի օգտագործի, որ այդ մեռելին ես հարություն տամ հեռուստացույցի միջոցով»: Չեր կարող գտնվել ավելի անպատկառ և զարհուրելի անելիք բան, քան սգավոր մի մարդուց պահանջել, որ իր մահացած հարազատին քաշի ու զգի հեռուստացույցի վրայ, որ ծածկի նրան այն հիմար սնապաշտությամբ՝ որ Բենի Հիննը պիտի հարություն տա նրան հեռուստացույցի միջոցով:



Սակայն սա միայն դաժանության մի ծայրահեղ ձևն է: Կա դաժանության մի այլ կերպ, որ տարվում է օրից օր եւ շաբաթից շաբաթ, այն զարմանալի բժշկության ակնկալիքով և ստաբարո բժշկության բեմադրություններով, որ իբր թե բժշկում են հիվանդ հավատացյալներին, և նրանց հուսադրում են, որպեսզի վերջում բոլոր այդ հույսերը հողա ցնդեն: Իսկ այդ բոլորի արդյունքը այն է լինում, որ այդ բեմադրություններից հուսախաբ մնացած անձերը մերժում են ճշմարիտ Ավետարանը, մերժում են Քրիստոսը ու լքում են Քրիստոնեությունը, որովհետև չեն ստացել այն ինչն իրենց խոստացվել էր:

Հոգեգալստականների ինքնությունն ու նրանց բնորոշող գծերը Աստվածաշնչային չեն: Ջանգվածային լրատվության շրջանակներում լավ ձանաչում են նրանց ղեկավարների մատակարարող ծախքավոր բիզնեսների մասին, որոնք ամենօրյա խաբեբայությամբ չափազանց ազդեցիկ են միլիոնավոր դուլարներ կողոպտելու մեջ: Մի մեծ բիզնեսական «քարոզիչ» և դերասան ու խաբեբա՝ **Ջոյս Սայերի** տարեկան շահն է մոտ 900,000 դոլար այլ կողոպուտների կողքին: Իսկ նրա նման մի այլ «քարոզիչ», 2009 թվականին կողոպտեց 63 միլիոն դոլար իր այսպես ասած եկեղեցուց: Նրանք մարդկանց հուսահատությունն առուծափի են վերածել: Դրա համար էլ Հիսուս ուղարկեց իր յոթանասուն աշակերտներին ասելով. *«գնացե՛ք բժշկելու, բայց դրամ մի վերցնե՛ք»* **Ղուկաս 9:3**: Իսկ սրանց մոտ՝ եթե կարող ես բժշկել, արդեն անմիջապես հարստանում ես: Մարդիկ անմիջապես հարստանում են երբ չեն կարող բժշկել, բայց ձևացնում են՝ իբր թե բժշկում են:



Արդար պիտի լինի ասել, թե շարժման մեջ կան մաքուր հավատացյալների խմբեր, որոնց չպետք է շփոթել շարժման հետ, որը լեցուն է խաբեբաներով, երագողներով, կեղծավորներով, խտտորած աստվածաբանությամբ զբաղվող սուտ ուսուցիչներով, ովքեր մարդկանց չարաշահում են: Նաև կան նրանց ծառայող միջին կամակատար հերետիկոսները, ու նրանց մեծ ղեկավարները ինչպիսիք են՝ **Ֆրեդ Փրայս, Քենեթ Քոպլենտ, Քենեթ Հեյզին, Մերիլին Հիքի, Ջոյս Սայեր,** և այլն, որոնք լիովին խտտորյալ կարծիք ունեն



Քրիստոսի բնության մասին: Նրանք են, որ ասում են Քրիստոս մեղավոր դարձավ խաչի վրա, դժոխք գնաց և երեք օրեր իր մեղքերի համար տանջվեց, իսկ հետո Հայրը նրան արձակեց դժոխքից, և նա այն ժամանակ էր որ հարություն առավ: Նրանք Աստծո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Սուրբ Երրորդության երկրորդ անձին վերածեցին հասարակ մի մեղավորի, որ պետք է պատժվեր իր մեղքերի համար: Սա բացարձակ հերետիկոսություն և աղանդ է Քրիստոսի սուրբ անձի նկատմամբ: Նաև Քենեթ Քոպլենտն ասել է մի անգամ. **«այդ Հիսուսը երբեք Աստված չէր իր անձից ավել»:**

Եկեղեցու արարողություններն շատ պարզ են լրիվ անտեսելով ավանդական եկեղեցիների կարգը եւ պատարագը: Երաժշտությունը լրիվ արդիական բնույթ ունի, որ չունի նույնիսկ բողոքական եկեղեցիների հին երգեցողությունը: Ժողովականները աղոթքի ժամանակ կարող են պարել եթե կամենան և

բեմ բարձրանան՝ երբ ուզեն, ու Աստծո փառաբանեն երկնային «լեզուների» աղոթքի լեզվով: Պաշտամունքները չափազանց զգացմունքային են լինում: Իրենց ժողովներում շեշտը դրվում է երաժշտության եւ քարոզի վրա:

Տեղական եկեղեցիները անկախ են իրենց կառավարությամբ և ներքին գործունեությամբ: Աստծո ժողովներ Եկեղեցու կառավարությունը այն անսովոր խառնուրդն է Երիցական եւ ժողովական եկեղեցական կարգերին: Շրջանային պատասխանատուները ունեն հովվական հսկողություն իրենց հանձնված բոլոր եկեղեցիների հանդեպ և պատասխանատու են քաջալերելու տեղական նոր կառուցվող համայնքներին: Իսկ յուրաքանչյուր շրջան ունի իր գլխավոր երեցը որ քննարկում է և առաջարկում նոր երեցներ լիազորել: «Ընդհանուր Տեսուչը» եւ ուրիշ գլխավոր ղեկավարներ ունեն ազգային գլխավոր կենտրոնը, որ գտնվում է Սպրինգֆիլդ, Միզուրիում:

#### 4. Ի՞նչ են Հոգեգալստականների Ուսուցումները

Հոգեգալստական կամ Պենտեկոստական Շարժումը Ամերիկայում և ամբողջ աշխարհում շարունակվում է մնալ շատ ժողովրդական և զորեղ, քանի որ տարածում է այն ստահող գաղափարը որ մարդ «երկնային լեզուներ» խոսելով մոտենում է Աստծուն: Այո, տարածված է այս երևույթը ամենուրեք և հավանական է որ ներկա ժամանակներում, ոչ մի հարց Քրիստոնեության մեջ այնքան բաժանում չի ստեղծել՝ որքան այս լեզվախոսության հարցը:



Նորոյա հոգեգալստականներ հավատում են, որ իրենց եկեղեցին սկիզբ է առնում պատմության այն կետից՝ երբ Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա ու նրանք սկսեցին լեզուներ խոսել:

Հոգեգալստական եկեղեցիները սովորեցնում են թե, Քրիստոնյաներ ստանում են Սուրբ Հոգին երբ նրանք առաջին անգամ դարձի են գալիս, սակայն չեն լցվում Սուրբ Հոգով՝ բացի երբ նրանք «մկրտվեն Հոգով»: Այս Հոգու մկրտությունը փրկության համար կարևոր



չի համարվում, սակայն մարդիկ քաջալերվում են դա ունենալու՝ որպես հավելյալ ուժ վկայության համար:

Հոգեգալստականները հավատում են, որ Հոգու մկրտությունը իր հետ անպայման բերում է «լեզուներ խոսելու» կարողությունը: Հետևաբար, ովքեր որ փափագում են ունենալ Հոգու մկրտությունը՝ պետք է որ փափագեն ունենալ լեզուներ խոսելու կարողությունը: Սակայն, սրանց կողմից որևէ փորձ նմանվելու Առաքյալների ստացած Հոգեգալստյան լեզուների պարզևին՝ պարզապես փորձեր են նմանվելու այդ

օրվան տեղի ունեցած հրաշքներից միայն մեկին: Սակայն այդ օրը նաև այլ հրաշքներ տեղի ունեցան: Աստված տալիս է իր պարգևները ում որ կկամենա:

Որոշ պենտեկոստականներ սակայն պնդում են, որ Հոգով լցվելու համար մարդ պետք է լեզուներ խոսի, եւ թե այլ եկեղեցիներ հոգևորությունից պարպված են, մասնավորապես այն եկեղեցիները որ «չոր», «հին», «ծիսական» կամ «ավանդական» են: Դրանով իհարկե նրանք հասկանում են հիմնականում Առաքելական, Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիները: Սակայն, նրանց ունեցած հսկայածավալ տգիտությունը և նույն ժամանակ արված անընդհատ փորձերը, որ իրենց հետևողներին զրկեն զարգացումից, Քրիստոնյական պատմությունից, աստվածաբանությունից, բարոյագիտությունից, եկեղեցաբանությունից, Քրիստոսաբանությունից և այլ նյութերից՝ նրանց պահում է կույր եւ տգետ, հոգևոր մի մեծ ինքնաշեն բանտում:

Որպես «ապացույց» իրենց «ճշմարիտ հավատքի» նրանք թութակի նման կրկնում են հետևյալ Աստվածաշնչային համարները մեր Առաքելական և Ուղղափառ Եկեղեցու հավատացյալների դեմ, միևնույն ժամանակ հանդգնելով որ իրենք իրենց «առաքելական» կոչեն:

- *Սրանք են նշանները, որոնք պիտի ուղեկցեն նրանց, որոնք հաւատում են. իմ անունով դեւեր պիտի հանեն, լեզուներ պիտի խօսեն: (Մարկոս 16:17)*
- *Ծագումով հրեայ հաւատացեալները, որոնք Պետրոսի հետ էին եկել, զարմացան, որ հեթանոսների վրայ եւս Սուրբ Հոգու շնորհները հոսում են. որովհետեւ լսում էին, որ նրանք լեզուներ էին խօսում եւ փառաբանում Աստծուն: Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց. «Ո՞վ կարող է արգելել, որ ջրով մկրտուեն սրանք, որոնք եւս Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպէս եւ մենք»: (Գործք 10:45-47)*
- *Եւ երբ Պօղոսը նրանց վրայ ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ. լեզուներ էին խօսում եւ մարգարէանում: (Գործք 19:6)*
- *Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը: (Ա. Կորնթացիներին 13:1)*
- *Գոհութիւն Աստծու. ձեր բոլորից աւելի շատ լեզուներ եմ խօսում: (Ա. Կորնթացիներին 14:18)*
- *Ուրեմն, եղբայրներ, նախանձախնդիր եղէք մարգարէանալու եւ լեզուներ խօսելը մի արգելէք: (Ա. Կորնթացիներին 14:39)*

Նրանք մասնավորապես շեշտում են որ Հոգեգալստական շարժումը սովորեցնում է «ամբողջական ավետարանը»: Նրանք ասում են թե Սուրբ Գրքերից ոչ մի մաս բաց չեն թողում, և թե «Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան»: (Եբրայեցիներին 13:8)



Առավել ևս, հոգեգալստականները մերժում են հոգևոր և աստվածաբանական բարձրագույն ուսումնարանները և դպրագիտական (scholastic) Աստվածաբանական ուսումնառությունը, եւ փոխարենը ընդդիմախոսելով՝ միշտ շեշտում են Հրեա առաջնորդների ասած խոսքերը առաքյալների մասին. «Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութեանն ի տես եւ վերահասու լինելով, թե նրանք տգէտ եւ անուս մարդիկ են, զարմացան, որովհետեւ ճանաչում էին նրանց, որ Յիսուսի հետ էին»: (Գործք 4:13), ու ընդհանրապես մոռանում են Աստվածաշնչի պատմությունից մի կարևոր փաստ՝ Աստված

ընտրեց Սողոսին, որպեսզի դառնա Պողոս Առաքյալ, և որպեսզի նա հետագայում գրեր Նոր Կտակարանի մոտ 65 տոկոսը: Իսկ Պողոս բարձր ուսում և կրթություն ուներ:

*«Ես հրեայ մարդ եմ՝ ծնունդ Կիլիկիայի Տարսոն քաղաքում, եւ դաստիարակուել եմ այստեղ, այս քաղաքում, Գամաղիէլի ոտքերի մօտ, կրթուած ըստ հայրենի օրէնքի ճշմարտութեան: Նախանձայոյզ էի Աստուհանդէպ, ինչպէս դուք բոլորդ՝ այսօր:» (Գործք 22:3)*

*«Թէեւ ինքս էլ մարմնի վրայ նոյն վստահութիւնն ունեմ. Եթէ մէկը կարծում է, որ ինքն այլ կերպ վստահութիւն ունի մարմնի վրայ, ես՝ առաւել եւս. թրխատուել եմ ութերորդ օրը, Իսրայէլի ցեղից եմ, Բենիամինի սերնդից, եբրայեցի՝ եբրայեցի ծնողներից, ըստ օրէնքի՝ փարիսեցի, ըստ նախանձախնդրութեան՝ հալածում էի եկեղեցին, ըստ օրէնքի արդարութեան՝ անբասիր:» (Փիլիպեցիներին 3:4-6)*

## 5. Պողոս և Կորնթոսի Եկեղեցին

Պողոս Առաքյալը Ավետարանը հեթանոսներին քարոզելու նպատակով, երկրորդ ճամփորդությամբ գնաց Եվրոպա, քարոզելով մի ժամանակ Փիլիպեյում, Թեսալոնիկեյում, Բերեայում, եւ Աթենքում: (Գործք 16:12-17:15):

Կորնթոսում սակայն, Պողոս մնաց մեկուկես տարի (Գործք 18:1, 9-11): Սա երկար ժամանակ էր մի առաքյալի համար որ անդադար չարժվում էր (2 Կորնթացիներուն 11:26): Կորնթոս քաղաքը ծովափնյա քաղաք էր՝ տիրահռչակ իր անբարոյությամբ: Այնտեղ Պողոս ծանոթացավ մի խումբ հրեաների և հեթանոսների հետ որոնք փափագում էին լսել և սովորել Աստծո մասին:



Կորնթոսում եկեղեցու հաստատումից հետո, Պողոս շարժվեց դեպի Եփեսոս և Փոքր Ասիա, Պաղեստինյան Կեսարիա եւ Անտիոք: Մի քանի տարի հետո, նորից գնաց Եփեսոս (Գործք 18:18-23, 19:1), ու այնտեղ լսեց Կորնթոսի եկեղեցու մասին: Լուրերը լավ չէին: Քրիստոնյաներ վիճաբանում էին իրար միջև քրիստոնեական կյանքի և վարքի հետ կապված զանազան նյութերի շուրջ: Նրանք վատ օրինակ էին հանդիսանում և քրիստոնեությունը վարկաբեկում:

Կորնթացի քրիստոնյաներ նամակ<sup>1</sup> են հղում Պողոս Առաքյալին, նրա խորհուրդները հայցելով զանազան նյութերի շուրջ, ներառյալ լեզուներ խոսելու հարցը: Նրանց մեջ կային անձեր որոնք սկսել էին լեզուներ խոսել և փափագում էին իմանալ այս հոգևոր պարզակի մասին: Ուղարկված նամակը առիթ տվեց առաքյալին, որպեսզի նրանց լուսաբաներ այդ նյութի շուրջ:

Իր պատասխան նամակով, Պողոս քննադատում է նրանց միջև տեղի ունեցած վեճերը որոնք պատճառ էին հանդիսանում քրիստոնեական պառակտման. *«Եղբայրներ, ձեր մասին Քղուէի տնեցիներից ինձ տեղեկացուեց, թէ հակառակութիւններ կան ձեր մէջ:»* (Ա. Կորնթացիներին 1:11): *«Նախ՝ երբ ի մի վայր էք ժողովուում եկեղեցում, լսում եմ, թէ բաժանումներ կան ձեր մէջ. եւ մասամբ հաւատացի:»* (Ա. Կորնթացիներին 11:18), *«որովհետեւ ոչ թէ դէպի լաւը, այլ դէպի վատթարն են գնում ձեր հաւաքոյթները:»* (Ա. Կորնթացիներին 11:17):



Իրենց մեջ ունեցած անհամաձայնությունների պատճառով, մի շարք մարդիկ հետևում էին քրիստոնյա մի առաջնորդի, իսկ ուրիշներ՝ այլ անձի (Ա. Կորնթացիներին 1:12): Նրանց վերաբերմունքը ճիշդ չէր և Պողոս կարիքը զգաց նրանց ուղղելու. *«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որ բոլորդ էլ նոյն խօսքը ունենաք. եւ ձեր մէջ բաժանումներ չլինեն. քանզի հաստատ էիք նոյն մտքի եւ նոյն մտածման մէջ:»* (Ա. Կոր. 1:10):

Իր նամակի առաջին չորս գլուխներում, Պողոս փորձում է քրիստոնյաներին ցույց տալ պառակտման վտանգները: Նրանք վարվելակերպը այնպես էր, որ կարծեք անհավատներ լինեին (Ա. Կոր. 3:3): Նա ցույց տվեց նրանց եկեղեցում սեռական բարոյականության մասին (Ա. Կոր. 5:1-13, 6:12-20), եւ դատեր չունենալ իրար հանդեպ (6:1-8): Այս բոլոր կարգադրությունները բացահայտում են եկեղեցու ներքին հարցերը և Պողոսի լուրջ ու վճռական խոսքերը դրանք հարթելու համար: Հետո միայն Պողոս սկսում է պատասխանել նրանց տված հարցերին *«Այժմ, այն բաների մասին, որ ինձ գրել էիք»* (Ա. Կոր. 7:1): Նախ, նա պատասխանում է ամուսնության վերաբերող հարցին յոթներորդ գլխում: Ութերորդ գլխի սկզբում անցնում է մյուս հարցին *«Իսկ այժմ, կուռքերին արուած զոհերի մասին: Ոմանք ասում են՝ այդ մասին մենք անհրաժեշտը գիտենք: Գիտութիւնը հպարտացնում է, բայց սէրը՝ հաստատում:»* (8:1):

Իր գրած ձևից ըմբռնում ենք, որ Կորնթոսի քրիստոնյաները հպարտ էին իրենց ունեցած «գիտությամբ»: Պողոս ցույց է տալիս որ իրենց իմացածը, (կամ գոնե այն ինչ կարծում էին թե իմանում են) ինչպես էին օգտագործում, որ վնասում էր նրանց հոգևոր աճմանը: Նրանց ունեցած այդ գիտությունը պատճառ էր լինում եկեղեցու մեջ վեճերի և բաժանումների: Իսկ սերը՝ գրում է նա, ավելի արժեք ունի և ավելի մեծ ցուցանիշ է քրիստոնյական կենցաղում: Իններորդ գլխում, նա բացատրում է իր իրավունքները որպես առաքյալ:


<sup>1</sup> Այս տեսակի մի նամակ գոյություն ունի Հայոց Աստվածաշնչի Հավելված մասում:

Տասներորդ գլխում, առաքյալը շարունակում է չաստվածներին զոհ մատուցելու խնդիրը: Տասնմեկերորդ գլխում, նա խոսում է Կորնթացիներին իրենց հավաքույթներում ունեցած պաշտամունքի, զոհաբերության և կերակուրների մասին:

Տասներկրորդ գլխում, Պողոս հայտնում է որ զանազան հոգևոր պարզկներ կան, որոնք սակայն գալիս են նույն Սուրբ Հոգուց (12:4): Աստված տալիս է այս հատուկ կարողությունները բոլորի օգտի համար (12:7), որպեսզի քրիստոնյաներ կարողանան իրար օգնել: Պողոս նշում է այն պարզկները, որոնցից մեկն է *«միևսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խօսելու շնորհ, միևսին՝ լեզուների թարգմանութեան շնորհ:»* (12:10): Հունարեն «խարիզմատա» բառը նշանակում է պարզկներ:

Պողոս նշում է նմանօրինակ հոգևոր պարզկներ Հռոմեացիներին իր գրած նամակում (Հռոմ. 12:6-8), բայց այդ նամակում գոյություն չունի լեզուների կամ թարգմանության մասին որևէ խոսք:

Ամեն մարդ նույն հոգևոր պարզկները կամ կարողությունները չունի, գրում է Պողոս: *«Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք, միևսին՝ գիտութեան խօսք՝ նոյն Հոգուց, միևսին՝ հաւատ՝ նոյն Հոգով, միևսին՝ բժշկութեան շնորհ՝ նոյն Հոգով, միևսին՝ զօրաւոր գործերի կարողութիւններ, միևսին՝ մարգարէութիւն, միևսին՝ հոգիները զանազանելու շնորհ, միևսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խօսելու շնորհ, միևսին՝ լեզուների թարգմանութեան շնորհ: Բայց այս ամէնը միեւնոյն Հոգին է առաջացնում եւ բաժանում իւրաքանչիւրին՝ ինչպէս որ կամենում է:»* (12:8-11): Պարզկների այս տեսակ




բաժանմամբ, Աստված եկեղեցու անդամներին քաջալերում է իրար հետ աշխատելու և օգնելու կարևորությունը: Մարդկային մարմինն էլ է նույնը ցույց տալիս. Ուտքեր, ձեռքեր, աչքեր և այլ մասեր որ տարբեր գործեր ունեն: Բոլորը մարմնին օգնելով աշխատում են որպես մեկ միություն, և մարմնի տարբեր անդամներ օգնում են իրար: Նույնն է պարագան նաև եկեղեցում, **Քրիստոսի Մարմնին** (12:12:27): Աստված կարգում է մարդկանց տարբեր հոգևոր պաշտոններով. Առաքյալներ, մարգարեներ, ուսուցանողներ, զորավոր գործեր կատարողներ, բժշկողներ, օգնականներ, կառավարողներ և լեզուներ խոսողներ (12:28): *«Բոլորն էլ լեզուներ են խօսում»* հարցնում է Պողոս.. (**Ի հարկե Ո՞՞**): Հետևաբար, բոլոր քրիստոնյաներ չեն կարող լինել մարգարեներ, ուսուցանողներ, հրաշագործներ, բժշկողներ, լեզուներ խոսողներ կամ թարգմանիչներ (12:29-30):

## 6. Ի՞նչ է Նշանակում Լեզուներ Խոսել


Ահա Աստվածաշնչի բնագիրը որ առաջին անգամ պատմում է լեզուներ խոսելու մասին:

*«Երբ Պենտեկոստէի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եւ յանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման. եւ լցրեց ամբողջ այն տունը,*



ուր նստած էին: <sup>3</sup>Եւ նրանց երեւացին բաժանուած լեզուներ, նման բոցեղէն լեզուների, որոնք եւ նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ: <sup>4</sup>Եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խօսել ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին նրանց խօսել էր տալիս: <sup>5</sup>Եւ կային Երուսաղէմում բնակուող հրեաներ, երկիւղած մարդիկ, եկած երկնքի տակ ապրող բոլոր ազգերից: <sup>6</sup>Եւ երբ այս ձայնը լսուեց, բազմութիւնը հաւաքուեց ու խոնուեց, որովհետեւ լսում էին, որ նրանք խօսում էին իրենցից իւրաքանչիւրի լեզուով: <sup>7</sup>Ամէնքը հիանում էին եւ զարմանում. ու միմեանց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խօսում են, գալիլիացիներ են. <sup>8</sup> բայց ինչպէ՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր իւրաքանչիւրի բարբառով, որ ծնուած օրից խօսում ենք: <sup>9</sup>Մենք՝ պարթեւներ, մարեր եւ իլամացիներ, եւ նրանք, որ բնակուում են Միջագետքում, Հրէաստանում՝ եւ Գամիրքում, Պոնտոսում եւ Ասիայում, <sup>10</sup> Փոլիգիայում եւ Պամփիլիայում, <sup>11</sup> թէ՛ հրեաներ եւ թէ՛ հրէուլթեան դարձածներ, կրեացիներ ու արաբներ, - լսում ենք, որ նրանք խօսում են մեր լեզուներով Աստծու մեծագործութիւնների մասին»: <sup>12</sup> Բոլորը զարմանում էին եւ միմեանց ասում. «Ի՞նչ կարող է լինել սա»: <sup>13</sup> Իսկ ուրիշներ, ծաղրելով, ասում էին. «Նոր գինուց հարբած են»:» (Գործք 2:1-13):

Առաքելական, կաթոլիկ կամ ուղղափառ բոլոր քրիստոնյաներ, որոնք սերտում են Աստվածաշունչը, համաձայն են որ լեզուների պարզը գոյություն ունի ներշնչված այդ Սուրբ Գրքերում: Նոր Կտակարանում, լեզուների մասին հայտնվում է պարզների երկու տեսակ: Առաջին Կորնթացիներին գրված նամակի 12:8-11 համարներում կա «լեզուների տեսակներ» եւ «լեզուների թարգմանութիւն», որպէս ձրի տրված պարզ Սուրբ Հոգուց: Ա. Կորնթացիներին 12:28-30 համարների մեջ «լեզուներ» բառը պարզների ցանկում է: Մենք սա կոչում ենք «հոգևոր պարզ» որովհետև գալիս է Հունարեն «խարիզմա» բառից, որ մատնանշում է թե պարզը Աստծո տրված շնորհքն է: Այս պարզը բնական կարողությամբ չէր տրվում, այլ որպէս եզակի եւ յուրահատուկ պարզ էր տրված ինչպէս տեսանք Աստվածաշնչի բնագրում:



Greek Manuscript of 1st Corinthians 12

<sup>2</sup> Կարգ մը Եկեղեցու Հայրեր ինչպիսիք են Ս. Օգոստինոս եւ Տեղաուկիանոս, իրենց գրությանց մեջ «Հրէաստանում» բառի տեղ հիշում են «Հայաստանում» բառը:

Սուրբ Հոգին այն գերիշխող ուժն է որ բաժանում է այդ պարզները, որոնք նշելուց հետո Պողոս Առաքյալ ավելացնում է. *«Բայց այս ամենը միեւնոյն Հոգին է առաջացնում եւ բաժանում իւրաքանչիւրին՝ ինչպէս որ կամենում է:»* (Ա. Կոր 12:11): Ոչ մի անձ չունի բոլոր պարզները եւ չի կարող ունենալ բոլորը: Պետք է ուշադիր լինենք չշփոթելու **Սուրբ Հոգին որպէս պարզ**, եւ **հավատացյալը որ Սուրբ Հոգուց պարզներ է ստանում**: Ամեն հավատացյալ մկրտութեամբ ստանում է Սուրբ Հոգին որպէս պարզ: Բայց ամեն հավատացյալ չի ստանում այն պարզները որ Սուրբ Հոգին է տալիս: Սրանք երկու տարբեր հասկացողություններ են:

Այն եզրը որ բնորոշում է լեզուների մասին, կոչվում է «Գլոսսոլոգիա», որը ունի Հունարեն երկու արմատ. «Գլոսսա» (լեզու՝ ինչպէս օրինակ Հայերենը) եւ «լոգիա» (խոսք կամ խոսակցություն): Ուրեմն նշանակում է մի լեզու կամ լեզուներ խոսել: Անգլերենով Glossology<sup>3</sup> -ն մարդաբանական այն մասնագիտությունն է, որը ուսումնասիրում է լեզուների եւ բարբառների դասակարգման գործը:

Գլոսսա բառը Հունարեն Նոր Կտակարանում երևում է ավելի քան հիսուն անգամ, ու գործածվում է նկատի ունենալով ֆիզիկական լեզուն՝ ինչպէս օրինակ Հակոբոս Առաքյալի նամակում. *«Այսպէս էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում. Ահա թէ մի փոքր կրակ ինչպիսի՝ անտառներ է հրդեհում:»* (Հակոբոս 3:5): Նա նաև նկատի ունի, որ կրակի բոցերը լեզուների նման են, ու նաև *«Եւ նրանց երեւացին բաժանուած լեզուներ, նման բոցեղէն լեզուների, որոնք եւ նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ:»* (Գործք 2:3): Իսկ Հետևյալը խոսելու մասին այլաբանական իմաստով գրված է Աստվածաշնչի հատվածում. եւ իմ **լեզուն** (խոսակցությունը) ցնծաց (ուրախացավ): *«Ինքը Դաւիթը Յիսուսի մասին ասում է. «Նախապէս Տիրոջը ամէն ժամ տեսնում էի իմ առաջ, որովհետեւ նա իմ աջում է, որպէսզի չսասանուեմ. դրա համար իմ սիրտը ուրախ եղաւ, եւ իմ լեզուն ցնծաց, եւ իմ մարմինն էլ պիտի ապրի յոյսով:»* (Գործք 2:25-26): Պարզ ու հստակ է որ խոսքի մասին ասվածը սովորական խոսակցական հաղորդակցական լեզվի մասին է:

Երբ մեր Տերը մարգարեացավ լեզուների մասին, որն ի դեպ միակ նշվածն է բոլոր չորս ավետարաններում, նա ասաց. *«Սրանք են նշանները, որոնք պիտի ուղեկցեն նրանց, որոնք հաւատում են. իմ անուևով դեւեր պիտի հանեն, լեզուներ պիտի խօսեն:»* (Մարկոս 16:17): Աստվածաշնչի համարյա բոլոր անգլերեն եւ այլ լավագույն թարգմանությունները նույն համարում ունեն «նոր լեզուներ» թարգմանությունը: Հունարեն բնագիրը ունի նաև «Կայնոս» (նոր) ածականը, լեզուներ բառի հետ: (Հունարենով, «Գլոսսայիս լալեսուսին կայնայիս»): Կայնոս կամ կայնայիս նշանակում է, որ նրանք նոր լեզուներով էին խոսելու: Լեզուներ՝ որ ոչ սովորել էին եւ ոչ գործածել մինչ այդ ժամանակ:

Երբ ասեմ որ **«Չինարեն լեզուն «նոր» է ինձ համար»**, դա չի նշանակում, որ երբեք չգիտեի որ չինարեն կոչված լեզու կա, այլ այն որ նրա մասին ծանոթությունը եւ գործածությունը նոր են ինձ համար, որովհետև ոչ կարող եմ խոսել եւ ոչ էլ հասկանալ այդ լեզուն երբ ուրիշներ խոսում են այն: Մյուս կողմից Արաբերեն լեզուն ինձ համար երբևիցե **«նոր» չէ**, որովհետև գերազանց կերպով կարող եմ այն հասկանալ, կարդալ, խոսել եւ գրել:

<sup>3</sup> Կամ լեզվագիտություն – dictionary.reference.com

Գործք Առաքելոց Թղթի մեջ Ղուկաս գործածում է այլ մի ածական երբ ասում է «**Եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խօսել ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին նրանց խօսել էր տալիս:**» (Գործք 2:4):

Հունարեն «Հետերոս» (ուրիշ) բառը, պարզապէս նշանակում է՝ որ նրանք սկսեցին խօսել իրենց խոսակցական լեզվից այլ խոսակցական լեզվով: Բնագիրը ամբողջությամբ սա է ասում եւ պաշտպանում: Նկատի առեք լսող բազմության զարմացած տպավորությունը այդ հրաշքի նկատմամբ. **«Ամէնքը հիանում էին եւ զարմանում. ու միմեանց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խօսում են, գալիլիացիներ են. բայց ինչպէ՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր իւրաքանչիւրի բարբառով, որ ծնուած օրից խօսում ենք:»** (Գործք 2:7-8):



Ամեն մարդ նրանց խոսքերը լսեց իր խոսակցական լեզվով: (Գործք 2:6):

Այստեղ «լեզու» բառը Հունարեն «Դիալեկտո» բառն է, որից ունենք հայտնի «դիալեկտ» բառը: «Գլոսսա» (Լեզու) եւ «Դիալեկտոս» (լեզու) բառերը գործածվել են նույնանման կերպով, եւ ակնհայտ է դառնում, որ առաքյալները խոսում էին սովորական Եբրայեցերենից կամ Արամերենից տարբեր՝ մարդկանց հայտնի խոսակցական ուրիշ լեզուներով: 9-ից 11-րդ համարները այդ լեզուները ճշգրտորեն նշում են: Սա հրաշագործ այդ երևույթն էր, որ առաքյալներին կարողություն տվեց խոսելու **ԱՅՆ Լեզուները**, որ մինչ այդ չէին սովորել: Գործք Առաքելոցի այս հատվածում, լեզուներ խոսելու հրաշքը մեզ տրվում է անարատ եւ անեղծ աստվածային հրաշքի ձևով:

Գործք Առաքելոցի երկրորդ գլխում, կարդում ենք, որ Առաքյալները սկսեցին խոսել այլ խոսակցական լեզվով: Լեզուների պարզև արդյոք գոյություն ունի՞: Այո, լեզուներ խոսելու հրաշքը գոյություն ունի որպես աստվածային պարզև, բայց ոչ այն անհիմաստ ու անհասկանալի «բլա-բլա»ն որ հոգեգալստականներ կամ Կյանքի խոսք կամ Աստծո ժողովների հերետիկոս ու աղանդավոր մեծավորներն են բարբաջում: Աստվածաշունչը ավելի հստակ չի կարող լինել, երբ պարզ ու մաքուր աչքերով ես կարդում այս համարը **«որովհետեւ լսում էին, որ նրանք խօսում էին իրենցից իւրաքանչիւրի լեզուով: »** (Գործք 2:6): Առաքյալները խոսեցին **այն լեզուներով** որ մոտ 16 տարբեր երկրներից ժամանած մարդիկ լսում էին առաջին Ավետարանը **իրենց խոսած լեզուներով: Պետք է տրամաբանել... Անուս գալիլիացի առաքյալները գնացին այլ երկրներ ու ինչպէ՞ս կարողացան խոսել այդ երկրների լեզուներով, ինչպէս օրինակ Հունարեն, Հայերեն, Եթովպերեն եւ Լատիներեն եթե Սուրբ Հոգին այդ պարզևը նրանց չչնորհեր:**

**«Ամէնքը հիանում էին եւ զարմանում. ու միմեանց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խօսում են, գալիլիացիներ են. բայց ինչպէ՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր իւրաքանչիւրի բարբառով, որ ծնուած օրից խօսում ենք: Մենք՝ պարթեւներ, մարեր եւ իլամացիներ, եւ նրանք, որ բնակւում են Միջագետքում, Հրէաստանում եւ Գամիրքում,**

Պոնտոսում եւ Ասիայում, Փռիւզիայում եւ Պամփիլիայում, Եգիպտոսում եւ Կիւրենիայի հարեւան Լիբէայի շրջաններում, եւ Հռոմից եկածներ՝ թէ հրեաներ եւ թէ հրէնութեան դարձածներ, կրեացիներ ու արաբներ, - լսում ենք, որ նրանք խօսում են մեր լեզուներով Աստծու մեծագործութիւնների մասին»։ (Գործք 2:7-11):

Նկատի առեք վերևի համարում «մեր լեզուներով» խոսքը: Ժողովուրդը լսում էր Առաքյալներին, որոնք քարոզում էին իրենց ժամանած երկրի բնիկ լեզվով, այսինքն Պարթևերեն, Հայերեն, Հունարեն, Լատիներեն, և այլն, եւ ոչ մի անհասկանալի երկրային «բլա բլա»: Երբեք չի եղել ինչ որ մի երկնքի անժանոթ լեզու որ խոսվել է, ու մարդ չի հասկացել եւ կամ կարիք է զգացվել նրա թարգմանության: Հսկայական տարբերություն կա աստվածաշնչյան լեզուների եւ Աստծո ժողովների, Կյանքի Խոսք կամ հոգեգալստականների հերետիկոսյան խոսածների միջև:

Հետևյալ համարները Հովհաննու Հայտնության Գրքից են, որոնք պետք է ուշադրությամբ սերտել: Նրանց հետ մեջբերել եմ լեզուներ բառի հունարեն «գլոսսա» խոնարհված կամ հոլովված համապատասխանող բառը, որ նույնպես խոսակցական կամ հաղորդակցական լեզու է նշանակում:

*«Եւ նոր երգեր էին երգում ու ասում. «Արժանի ես առնելու այդ գիրքը եւ բաց անելու դրա կնիքները, քանի որ մորթուեցիր եւ գնեցիր մեզ Աստծու համար, քո արիւնով, բոլոր ցեղերից եւ լեզուներից (գլոսսիս) ու հեթանոսների բազմութիւններից:» (Յայտն. 5:9)*

*«Եւ դրանից յետոյ տեսայ մի մեծ բազմութիւն, - որին թիւ չկար, - բոլոր հեթանոսներից եւ բոլոր ազգերից, բոլոր լեզուներից (գլոսսոն) եւ բոլոր ժողովուրդներից, որոնք կանգնած էին աթոռի առաջ եւ Գառան առաջ՝ իրենց վրայ սպիտակ զգեստներ գցած եւ արմաւենու ճիւղեր իրենց ձեռքերին:» (Յայտն. 7:9)*

*«Եւ հրեշտակն ինձ ասաց. «Պէտք է, որ դու վերստին մարգարէանաս ժողովուրդների, այլ ազգերի, լեզուների (գլոսսայիս) եւ երկրի թագաւորների մասին»: » (Յայտն. 10:11)*

*«Եւ նրանց պիտի տեսնեն բոլոր ցեղերն ու ժողովուրդները եւ բոլոր լեզուներն (գլոսսոն) ու ազգերը, որովհետեւ նրանց դիակը ընկած պիտի մնայ երեք օր. եւ թոյլ չպիտի տան, որ նրանց ոսկորները թաղեն գերեզմաններում: » (Յայտն. 11:9)*

*«Եւ նրան իշխանութիւն տրուեց բոլոր ազգերի եւ լեզուների (գլոսսան) ու ժողովուրդների վրայ» (Յայտն. 13:7)*

*«Եւ տեսայ երկնքի մէջ թռչող մի ուրիշ հրեշտակ, որ յաւիտենական աւետիս ունէր քարոզելու երկրի վրայ բոլոր ազգերին եւ լեզուներին (գլոսսան):» (Յայտն. 14:6)*

*«Նաեւ հրեշտակն ասաց ինձ. «Եւ այն ջրերը, որ տեսար, եւ ուր նստած էր պոռնիկը, ժողովուրդներ են, բազմութիւններ, ազգեր եւ լեզուներ (գլոսսայի): » (Յայտն. 17:15)*



Յուրաքանչյուր հատվածում երբ «լեզու» բառը հիշվում է, նշանակում է այն լեզուները որ կապված են ազգությունների եւ ժողովրդների հետ: Երբեք պատճառ չկա կասկածելու որ Մարկոսի Ավետարանի, Գործք Առաքելոցի եւ Հովհաննու Հայտնության մեջ հիշվածները սովորական պարզ խոսակցական լեզուների մասին են, ինչպես տեսանք:

## 7. «Լեզուներ»ը Կորնթացիներին Գրված Ա. Նամակում

Ավելի մեծ խնդիրներ է առաջանում, երբ փորձում ենք մեկնաբանել Ա. Կորնթացիներին գրված նամակի 12-ից 14-րդ գլուխներում լեզուների մասին ավելի քան քսանմեկ տարբեր վերագրումները: Կան մարդիկ ովքեր կարծիք են հայտնում, որ Առաջին Կորնթացիներում լեզուների մասին գրվածը հոգեգմայլ «երկնային» խոսքեր են, որ անծանոթ են որևէ տեղ այս աշխարհում: Նրանք իրենց ասածները հիմնում են «անծանոթ» խոսքի վրա, որ գտնում ենք Ա. Կորնթացիներին 14րդ գլխի 2, 4, 13, 14, 19 եւ 27րդ համարներում: Բայց Աստվածաշունչ ընթերցողը պետք է նկատի, որ ամեն տեղ որ գտնում է «անծանոթ» բառը, **դա գրված չէ հունարեն բնագրերում**, այլ ավելցված է թարգմանիչների կողմից երբ թարգմանում են հունարենից դեպի այլ լեզուներ: Ինչպես մյուս առաքյալներին՝ Սուրբ Հոգին Պողոս Առաքյալին չներշնչեց, որպեսզի գրեր անծանոթ անհասկանալի մի լեզվով:

Ես տրամաբանական պատճառ չեմ գտնում Ա. Կորնթացիների մեջ գրվածի իմաստը փոխելու: Ամեն ուրիշ տեղ Աստվածաշնչում երբ «լեզու» բառը գտնում ենք, հասկանում ենք մարդկային լեզուներ: Ուրեմն իմաստը ինչի՞ պետք է փոխվի հենց այս գլխում: Լեզվական, բնագրային եւ իմաստային առումներով ոչ մի իրավունք չկա այդ բառի իմաստային փոփոխման՝ երբ իմաստը հասկանալի է ամենուրեք: Լեզվի եւ լեզուների մասին, Պողոսի գործածած բոլոր խոսքերը մատնանշում են օտար խոսակցական լեզուները. *«Նոյնպէս եւ դուք. եթէ լեզուներով յստակ չդարձնէք խօսքը, ինչպէ՞ս կը հասկացուի խօսուածը. որովհետեւ դրանով դուք նման կը լինէք մի մարդու, որ օդի մէջ է խօսում: Այնչափ լեզուների տեսակներ կան աշխարհում, բայց չկայ ոչինչ աննշանակ:»* (Ա. Կոր. 14:9-10):

Ոչ մի պատճառ չկա մարդու համար, որ չխոսի հասկանալի եւ ըմբռնելի լեզվով: Հունարեն «լալեո» բառը նշանակում է «խոսում եմ»: Այս բառը չի գործածվում պարզ ձայնի կամ աղմուկի պարագայում, ոչ էլ օգտագործվում է անկապակից խոսքեր, մրմունջ, մրմոց, քրթմնջոց, կամ անհասկանալի ինչ որ ձայներ հանելու համար: **Նոր Կտակարանում լեզուներ խոսել, նշանակում էր լսող մարդկանց համար բնական լեզուներ խոսել:**

Այն գերբնական երևույթը, որը պատահեց Հոգեգալստյան օրը վերնատան մեջ, **լեզուների պարզն էր, որով մարդիկ հավաքված Երուսաղեմում, կարողացան լսել Աստծո պատգամը իրենց հասկացած լեզուներով:** Դա իսկապես հրաշք էր Աստծո կողմից, ինչպես որ Նա նույնը կատարեց, սակայն երբ խառնակեց մարդկանց լեզուները Բաբելոնի Աշտարակի շինության ժամանակ (Ծննդոց 11:1-9): Տարբերությունն այն էր, որ Ծննդոցի մեջ, Աստված հանկարծ **պատժեց** չարերի լեզուները խառնակելով, որպեսզի չհասկանան միմյանց, եւ դրանով քանդեց նրանց չար ծրագիրը: Իսկ Նոր Կտակարանի պարագայում Նա **օրհնեց** Եկեղեցին լեզուների գիտությամբ, որպեսզի Հարուցյալ Քրիստոսի Սուրբ Ավետարանը քարոզվի բոլոր աշխարհին:

Լրիվ կողմնակալ եւ զարտուղի պիտի լիներ, եթե Աստվածաշնչում լեզուներ խոսելու մեկնաբանությունը դառնար խոսակցական, ըմբռնելի լեզուներից մի այլ բան: Ոչ մի նշույլ

անգամ չկա Սուրբ Գրքերի մեջ **ապացուցելու**, որ լեզուները խոսվել են որպես անհասկանալի, անկապակից, եւ ձայների մի անհարիր աղմկող ցնդաբանություն:

## 8. Հրեշտակների Լեզուները

*«Եթէ խօսեմ մարդկանց եւ հրեշտակների լեզուները, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղօղանջում են:» (Ա. Կորն. 13:1):*

Հոգեգալստականների կողմից, այս համարի սովորական մեկնաբանությունը այն է, որ լեզուները երկնային աղոթքի լեզու է, հրեշտակների կողմից խոսված:

Նախ պետք է նկատի առնենք որ տարբերություն կա «լեզու» եւ «լեզուներ» բառերի միջև: Երբ եզակի լեզու ենք ասում, բնականաբար ակնարկը մի լեզվի մասին է, իսկ երբ հոգնակի լեզուներ ենք ասում, ակնարկը մեկից ավելի լեզուների մասին է: Ուրեմն պետք է զանազանենք մեր բառերը զգուշությամբ ըստ Աստվածաշնչի:

**Լեզու նշանակում է, մեկ լեզու: Լեզուներ նշանակում է, մեկից ավելի լեզուներ:**

Երբ նրանք ասում են. «լեզուները երկնային հոգևոր աղոթքի **լեզուներ է**» սա տրամաբանական չի հնչում: Շիշո նախադասություն կլիներ ասել. «լեզուները երկնային հոգևոր **լեզուներ են**»: Բայց նաև նրանցից ոչ ոք չի ասում, որ լեզուները աղոթքի լեզուներ են (հոգնակի): Հոգեգալստականները սխալ մեկնաբանելով իմաստները, «լեզուներ» բառը օգտագործում են «լեզու» բառին հար եւ նման, ու սրանով արդեն աղավաղում են Աստվածաշունչը:

Աստվածաշնչի այդ համարը ասում է «լեզուներ» (հոգնակի) եւ ոչ թե «լեզու» (եզակի): Եւ ասում է «մարդկանց եւ հրեշտակների լեզուները»: Այստեղ կա մարդկային լեզուներ (հոգնակի) եւ հրեշտակների լեզուներ (հոգնակի): Այս համարը չի գրվել, որ հրեշտակները խոսում են միայն մեկ խոսակցական լեզու: Գրված է, որ հրեշտակները խոսում են «լեզուներ» (մեկից ավելի, ինչպես անում են Հին ու Նոր Կտակարանի էջերում): Այս համարը հետևաբար **չի ասում**, որ հրեշտակները խոսում են մի երկնային լեզվով:

Ուրեմն ի՞նչ է ասում այս համարը: Նա պարզապես բացատրում է որ եթե կարող լինեմ խոսել բոլոր մարդկային լեզուներով, որ մարդ կարող է իմանալ, սովորել ու խոսել, ու եթե իմանամ ու խոսեմ բոլոր հրեշտակների լեզուներով որ կարող եմ խոսել, (այսինքն մի խոսքով, ամեն ինչ իմանամ՝ որ կարելի է իմանալ) եւ սեր չունենամ, պարզապես մեծ աղմուկ եմ հանում: Համարի միտք բանն ու ճշգրիտ իմաստն այն է, որ սերը շատ ավելի կարևոր է, քան բոլոր լեզուներով խոսելը:

## 9. Աստված Երբևիցե Լեզուներով Խոսե՞լ է

Հոգեգալստականներ կամ պենտեկոստականներ հավակնում են, որ լեզուներ խոսելը Սուրբ Հոգով մկրտվելու ամառին ապացույցն է: Եթե հարց տաս մի խումբ հոգեգալստականների, թե ինչու լեզուներ են խոսում, նրանք կարող է վարանեն, եւ կամ պատասխանեն, որպեսզի Սուրբ Հոգուց ուժ ստանան, կամ նրանց հովիվն է այդպես ասել, կամ որովհետև ամեն մարդ իրենց եկեղեցում այդպես է անում:

Առաքելական եւ ուղղափառ քրիստոնեւոյթյան դավանած Աստվածը միակ Աստվածն է ամբողջ տիեզերքի, որ ամենակարող, ամենագետ, ամենուրեք է, եւ ունի երեք անձեր մէկ եւ անբաժանելի Սուրբ Երրորդութեան մեջ. Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին:

Երբ Աստված խոսեց Հին Կտակարանի մարդկանց եւ մարգարեների հետ, երբեք չենք հանդիպում որևէ պատահարի, որ Նա նրանց հետ անձանոթ լեզուներով կամ հոգեգալստականների հասկացած «լեզուներ»ով խոսած լինէր, այլ խոսեց նրանց հետ մարդու նման, լսելի ձայնով, եւ խնդրո առարկա անձին աստվածային պատգամները տալու նպատակով, որպէսզի նա կատարէր Իր սուրբ պատվիրանները:

Նրա պատգամաբերները եւ հրեշտակները նույն ձևով խոսեցին Աբրահամի, Հակոբի, Մովսէսի, Գեղեոնի, Սամվելի, Եսայիի, Երեմեայի, Ամովսի եւ այլոց հետ: Նոր Կտակարանում նրանք խոսեցին Մարիամի, Պետրոսի, Պողոսի, Փիլիպպոսի, Հովհաննէսի, Հակոբոսի, եւ Աստվածաբան Հովհաննէսի հետ: Չենք հանդիպում ոչ մի անգամ, երբ Աստծո հոգով լցված մի մարգարե կամ առաքյալ, կամ աստվածաշնչալ մի սուրբ, եւ ոչ նույնինքն մարդեղացած Հիսուս Քրիստոսը՝ որ «լեզուներ»ով խոսեին: Ընդհակառակն, Հիսուս խոսեց հասկանալի լեզուներով՝ որ էին Եբրայեցերեն, Արամերեն, Հունարեն, եւ հավանաբար Լատիներեն: Աստված ժողովրդի հետ խոսեց եւ նրանք շատ հստակ հասկացան թէ Տէրը ինչ էր ասում, որովհետև Նա խոսեց իրենց լեզվով, եւ նույնիսկ պատերին գրեց իրենց լեզվով (Դանիել 5:24-25): Լեզուները Աստծո ստեղծածն է, ինչպէս Բաբելոնի աշտարակի ժամանակ, եւ հետևաբար նրա հրաշքը մարդկութեան համար:



**Աստված նույնն է երեկ, այսօր եւ հավիտյան:** «Որովհետեւ Աստուած խոսվութեան Աստուածը չէ, այլ՝ խաղաղութեան:» (Ա. Կորն. 14:33): Եթէ Աստված մեզ արտոնեց, որ Նրան պաշտենք լեզվի միջոցով, եւ մարդկութեան հետ խոսեց հասկանալի լեզուներով, ուրեմն հարկ չկա «քեզնից ավելի սուրբ եմ» բանախոսով գալու հրապարակ, քան ինչ որ Աստված մեզ տվեց ու սրբագործեց:

Ուրեմն նույն տրամաբանությամբ հետևում ենք Աստվածաշնչի գրության եւ հեղինակության: Եթէ լեզուներ խոսելը «ավելի սուրբ» է քան սովորական այլ լեզուները կամ բարբառները, ուրեմն Աստված ինչո՞ւ ներշնչեց սրբազան հեղինակները որպէսզի Աստվածաշնչի մատյանները գրի առնեն Եբրայեցերեն, Արամերեն եւ Հունարեն լեզուներով: «Բայց նախ այս բանն իմացէք, որ Գրքերի ամէն մի մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի, քանի որ մարգարէութիւնը ոչ թէ ըստ մարդկանց կամքի տրուեց երբեւէ, այլ Սուրբ Հոգուց մղուած է, որ խօսեցին Աստծու սուրբ մարդիկ:» (Բ. Պետրոս 1:20-21): Սուրբ Հոգին մարդկանց շարժեց գրելու հասկանալի եւ խոսակցական լեզուներով, եւ ոչ մի անհասկանալի եւ անկապակից «բլա բլա» «մլա մլա» ներով:

## 10. Ի՞նչ է Սուրբ Հոգու «Մկրտությունը»

Հովհաննես Մկրտիչը մարգարեացավ, որ Հիսուս ժողովրդին պիտի մկրտեր Սուրբ Հոգով, (Մարկոս 1:6-8): Գործք Առաքելոց 1-ին գլխի 5-րդ համարում, Հիսուս իր աշակերտներին ասեց որ նրանք այդ մկրտությունը պիտի ստանային մի քանի օրեր հետո: Հոգեգալստյան կամ Հրեական Շվուոթի Տօնին, Սուրբ Հոգին եկավ ու լցրեց առաքյալներին (Գործք 2:4), եւ իրականացնելով Հովհաննես Մկրտչի եւ Հիսուս Քրիստոսի մարգարեությունները: Պետրոս Առաքյալ ասեց, որ Սուրբ Հոգին թափվեց իրենց վրա (Գործք 2:17 եւ 33):



Տարիներ հետո, Սուրբ Հոգին եկավ Կոռնելիոսի, եւ ուրիշ հեթանոսների վրա (Գործք 10:44-45): Սա նույն պարագան էր, երբ Սուրբ Հոգին «թափվում» էր, կամ անձը «ստանում» էր Սուրբ Հոգին, (Գործք 10:45 եւ 47), կամ «մկրտվում» էր Սուրբ Հոգով (Գործք 11:15-17): Հոգու այս մկրտություններին անմիջապես հաջորդում էր ջրով մկրտությունը՝ կատարելով Քրիստոսի պատգամը: *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չձնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել»:* (Հովհ. 3:5): Սա մաքրում է հոգին եւ

**մարմինը բոլոր հիվանդությունից եւ մեղքից, եւ փոխարկում էր հավատացյալին որպէս վերստին ծնած անձ:**

Բոլոր այս խոսքերը նույն նշանակությունն ունեն: Սուրբ Հոգին տրվում է Աստծո ժողովրդին: Խոստացված մկրտությունը մատչելի է բոլոր հավատացողներին (Գործք 2:38-39): Պողոս Առաքյալ հայտնեց որ մարդիկ Սուրբ Հոգին ստանում էին՝ երբ հավատում էին (Գործք 19:2): Գործք Առաքելոց գիրքը արձանագրում է զանազան դեպքեր, երբ մարդիկ լցվում էին Սուրբ Հոգով: Բոլոր պարագաներում Ջրի եւ Հոգու մկրտությունը տեղի է ունենում միևնույն ժամանակ, հավատացյալի կյանքում:

Ակնհայտ է, որ Նոր Կտակարանի ժամանակ, եկեղեցու անդամների ջախջախիչ մեծամասնությունը լեզուներ չէին խոսում: Սա այն ազդակն էր, որ կապված էր հասկանալի եւ հաղորդակցական լեզուների օգտագործման հետ, որին ծանոթ էին այդ մարդիկ, եւ ոչ թէ ինչ որ մի անծանոթ օտար երկրի խոսակցական լեզու: Շատ համարներ կան, ուր մարդիկ լցվում են Սուրբ Հոգով, բայց լեզուների մասին ոչ մի նշում: Տեսնենք այդ դեպքերը:

Հոգեգալուստից կարճ ժամանակ հետո՝ առաքյալները աղոթում էին Աստծո օգնության համար: Երբ նրանք վերջացրեցին իրենց աղոթքը, *«Եւ մինչ նրանք աղօթքի մէջ էին, շարժուեց այն տեղը, ուր նրանք հաւաքուած էին: Ամէնքը լցուեցին Սուրբ Հոգով: ու համարձակութեամբ Աստծու խօսքն էին խօսում»:* (Գործք 4:31): Մինչ այդ, առաքյալները արդեն մեկ անգամ լցված էին Սուրբ Հոգով՝ Պենտեկոստի օրը՝ ու հիմա նրանք նորից են լցվել: Հիշատակվում է հրաշալի տեղաշարժը, բայց լեզուների մասին բան չի հիշատակվում:

Լեզուների մասին ոչ մի բան չի հիշատակվում երբ Սուրբ Հոգին իջավ Սամարիայի նորադարձների վրա (Գործք 8:14-17). երբ Եթովպիացի ներքինին դարձի եկավ (Գործք 8:38). Երբ Սողոս, դարձի գալով եղավ Պողոս Առաքյալ (Գործք 9:17-18). երբ նա դիմագրավեց Եդիմաս Մոզին (Գործք 13:8-11). Եւ երբ Պողոս առաջին անգամ քարոզեց Ասիայում (Գործք 13:44-52): **Ո՞ր է լեզուներով խոսելը այս բոլոր դեպքերում: Եթե լեզուներով խոսակցության հրաշք տեղի ունենար, ուրեմն դա կը հիշատակեր: Սա բացահայտ ցույց է տալիս, որ դա չի պատահել այս բոլոր դեպքերում, ու դրա համար չի հիշատակվել:** Սուրբ Հոգով լցվելով՝ լեզուներ խոսելը ինքնաբերաբար չի գալիս ու կարևոր չէ: **Մանավանդ միշտ նկատի առնելով, որ ավետարանները երբեք չեն հիշատակում Հիսուսը կամ Հովհաննես Մկրտիչը լեզուներ խոսելիս:**

Աստվածաշունչն է այս սրբազան դեպքերի ապացույցը: Գործք Առաքելոց գիրքը գրված պատմությունն է այդ պատահարների: Այդ գիրքը չունի հրահանգներ կամ խոստումներ, եւ պատմական գրքերի նման՝ կենտրոնանում է արտասովոր կամ կարևոր դեպքերի վրա: Ուշադրություն չի տրվում սովորական դեպքերին: Գործք Առաքելոց գիրքը մեզ տալիս է սահմանափակ մի պատկեր լեզուներ խոսելու մասին, եւ այն էլ միայն դա օգտագործելու համար որպես հասկանալի, խոսակցական, հաղորդակցական լեզու:

Պողոս եւ Նոր Կտակարանի մյուս հեղինակները չեն օգտագործում **«Սուրբ Հոգու Մկրտություն»** եզրը, բայց գրում են որ Սուրբ Հոգին տրվում է Աստծո ժողովրդին: Սուրբ Հոգին մատչելի է բոլոր հավատացյալներին որովհետև դա. *«Ժառանգութեան առհասարակեան է մինչեւ այն օրը, երբ կատարելապէս կը տիրանանք փրկութեանը»:* (Եփեսացիներին 1:14):

Առաջին Կորնթացիների 12-րդ գլխի 13-րդ համարում, Պողոս գրում է թե բոլոր հավատացյալները Հոգով մկրտված են Քրիստոսի մարմինը դառնալու որպես եկեղեցի: Եփեսացիներին գրված 5-րդ գլխի 18-րդ համարում նա կոչ է անում «Սուրբ Հոգով լցվելու»: Հունարենով, հեղինակը կարող է մի բառ այնպես գրել, որ ցույց տա իր ասածի մի անգամվա լինելը, կամ մշտական լինելը: Պողոսը օգտագործում է մշտական բայի կերպը, ցույց տալով որ քրիստոնյաները մշտապես պետք է լցվեն ևւ ապրեն Սուրբ Հոգով: Նա չէր գրում մի արտասովոր փորձառության մասին, որ մարդկանց փոխակերպում էր մի նոր կերպարի:

Պողոս Առաքյալի թղթերում ոչ մի նշույլ չկա առաջարկելու, որ Հոգու պարզևը երկու փուլով տրվող օրհնություն է: Օրհնակ, նա չի ասում որ լեզուների պարզևը ապացույցն է հոգևոր ավելի զորեղ ուժի եւ ներկայության: Հռոմեացիներին գրված նամակի 12-րդ գլխում նա նույնիսկ չի հիշատակում լեզուների մասին որպես կարևոր պարզև: Եկեղեցու առաջնորդները պարտավոր չէին լեզուների պարզևը ունենալ, այլ՝ ուսուցանելու այն լեզվով որ հասկանալի լիներ բոլորին: (Ա. Տիմ. 3:1-2, եւ Տիտ. 1:5-9):

Ո՞րն է ապացույցը Աստծո Հոգիին: Ի՞նչն է փաստում, որ Աստված մեր մեջ է: **Միայն Նրա սերը:** Եթե սիրենք ուրիշներին, եթե նույնիսկ սիրենք մեզ ատողներին, դա է միակ ապացույցը, որ Աստծո Հոգին առաջնորդում է մեզ:

Եթե ներշնչված ենք ապրելու Աստծո ուղիով եւ եթե մեր կյանքերը ցույց են տալիս Սուրբ Հոգու պտուղները (Գաղատացիս 5:22-23), ապա այն ժամանակ մենք կապացուցենք որ Աստծո Հոգին լցնում է մեր մտքերն ու սրտերը: Քրիստոնյայի լավ տիպարը այն զորեղ վկան է որ Հիսուս Քրիստոսի մասին իր հավատքն է վկայում:

## 11. Լեզուների Երեք Միակ Հիշատակումները

Երբ մի անձ հավատում է Տիրոջ եւ Նրա փրկագործության, նա ստանում է Սուրբ Հոգին: Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին գործում են որպես մեկ, սուրբ, եւ անբաժանելի Աստված: Բայց միթե յուրաքանչյուր քրիստոնյա որ ստանում է Սուրբ Հոգին, լեզուներ է խոսում: Գործք Առաքելոց գիրքը արձանագրում է բազմաթիվ բժշկություններ եւ այլ հրաշքներ, բայց միայն **երեք դեպքեր` ուր հասկանալի լեզուներ են խոսվում** ինչպես պիտի տեսնենք հիմա: Սա նշանակում է, որ երբ առաքյալները քարոզում էին Ավետարանը, եւ եկեղեցին հաստատում լեզուներ խոսելը սովորական պատահար չէր, այլ արտասովոր դեպք, :

Լեզուներ խոսելը Սուրբ Հոգուց տրված պարգև էր: Բայց ինչպես ամեն պարգև, դա նաև **կարող է չարաշահվել**: Լեզուներ խոսելը հոգևորության նշան չէր, **որովհետև**

**Կորնթացիների Եկեղեցին հոգևոր չէր**, քանի որ նրանք բացահայտ մարմնավոր էին (3:1-3): Մանավանդ երբ ծանր մեղանչում էին (5:1): Ուրեմն Պողոս նրանց գրելով հիշեցնում է Աստվածաշնչի օրենքը, որ պետք է իմանալին. *«քանզի օրհնքի մէջ էլ գրուած է. Օտար լեզուներով եւ օտարոտի շրթներով պիտի խօսեմ այդ ժողովրդին, սակայն եւ այնպէս նրանք զիս պիտի չլսեն, ասում է Տէրը:»* (Ա. Կորն. 14:21):

Պողոս այս համարում մեջբերում է Եսայիի Մարգարեությունը: Իսրայելի ժողովուրդը ձախողեց գործադրելու Աստծո պատգամները, որ նրանց տրվեց մարգարեների միջոցով: Հետևաբար Աստված նրանց հայտնեց, որ հետագային նրանք իր պատգամները պիտի լսեին լեզուներով, Եբրայեցերենից օտար խոսակցական հարաբերական լեզուներով: *«Այս ժողովուրդին*

*հետ, անհասկանալի շրթներով եւ օտար լեզուով պիտի խօսի»*: (Եսայի 28:11): Պողոս տեսնում է լեզուների պարզևր Եսայիի այս մարգարեության մեջ որպես նշան Իսրայելին: Իր բնաբանով «Այս ժողովրդին» բառերը վերաբերում են միայն Իսրայելին: Կորնթոսում լեզուներ խոսելու չարաշահումը չէր ստեղծվում խոսելու հավատից, այլ որովհետև նրանք անտեսում էին Սուրբ Գրքերը, որ նրանց սովորեցնում էր դրա ճիշդ օգտագործումը:

Լեզուների պարգևի նպատակը` որ Աստծո պատգամները Իսրայելին փոխանցելն էր, ստույգ է երեք համարներով Գործք Առաքելոց գրքում, ուր լեզուները հիշվում են: **Առաջին հիշատակումը Գործքի 2-րդ գլուխն է**, ուր լեզուների խոսելը գործածվում է որպես առաքելական քարոզչական եւ ավետարանող ազդակ, լրացնելով Եսայիի 28:11-ի մարգարեությունը: Կարիք ու ժամանակ չկար որ առաքյալները օտար լեզուներ սովորեին Ավետարանը տարածելու համար: Աստված լեզվական այդ պատճենը հաղթահարեց, նրանց տալով լեզվի այդ հրաշալի պարգևը: Հոգեգալստյան օրը *«կային երուսաղէմում բնակուող հրեաներ, երկիւղած մարդիկ, եկած երկնքի տակ ապրող բոլոր ազգերից:»* (Գործք 2:5): Եւ երբ առաքյալները *«սկսեցին խօսել ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին նրանց խօսել էր տալիս:»* (Գործք 2:4), ունկնդիրները հարց տվեցին. *«ինչպէ՞ս է,*



*որ մենք նրանց լսում ենք մեր իւրաքանչիւրի բարբառով, որ ծնուած օրից խօսում ենք:»* (Գործք 2:8): Նկատեցեք որ նրանք բոլորը հրեաներ էին ուրիշ երկրներից ժամանած, որ խոսում էին այդ երկրների լեզուները եւ բարբառները, բայց նրանցից յուրաքանչյուրը Ավետարանը լսում էր իր երկրի լեզվով: Եսայիի մարգարեությունը իրականանում էր:

Լեզուների երկրորդ հիշատակումը **Գործք Առաքելոց 10:46-ում** է: Այս դեպքում դարձյալ Ավետարանի քարոզչությունն էր, ու այս անգամ Հռոմեացի Կոռնելիոսին ու նրա ընտանիքին դարձի բերելը: Այս դեպքը կարելի չէ Հոգեգալստյան դեպքից անջատել, որովհետև Պետրոս իր փորձառության մասին ասեց. *«Եւ երբ սկսեցի խօսել, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ, ինչպէս որ իջել էր մեր վրայ սկզբում:»* (Գործք 11:15): Կոռնելիոսի տան մեջ, լեզուների խոսելը հրեաների համար նշան էր, այն ժամանակ երբ Ավետարանը քարոզվում էր (Գործք 10:44-46):

**Նոյն գրքի 19:6-ում տեսնում ենք երրորդ հիշատակումը:** Դարձյալ նրա նպատակը քարոզչական եւ ավետարանչական էր: Երբ Պողոս Եփեսոս գնաց, նա Հովհաննէս Մկրտիչի 12 աշակերտներ գտավ, ու նրանց հարցրեց. *«Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին ընդունեցի՞ք:»* (Գործք 19:6): Եփեսոսի այդ մարդիկը իրենք իրենց քրիստոնյա էին համարում, որովհետև նրանք Հովհաննէսի պատգամը լսել էին Ապողոսից: Հստակ է որ հավատք կա որ փրկության է առաջնորդում, եւ հավատք կա որ չի փրկում: Այս վերջինը անձնասեր ու անհոգ, մտավորական հավատքն է, որ Սատանան ու դէտրն անգամ ունեն (Հակոբոս 2:19, Մարկոս 5:7): Այս դարում անգամ, շատ մարդիկ կան որ Հիսուս Քրիստոսին հավատում են որպէս մարդ, եւ նույնիսկ որպէս Աստծո Որդի, բայց մկրտության կյանքով չեն ապրում: Պողոս եզրակացրեց, որ Եփեսոսում, Հովհաննէսի այդ աշակերտները նույն սխալ ուղու վրա էին: Երբ նա լսեց, որ նրանք փրկության ճանապարհին չեն, նրանց ասեց որ իրենց հավատքը պետք է հիմնելին Հիսուս Քրիստոսի վրա: *«Եւ երբ այս լսեցին, մկրտուեցին Տէր Յիսուսի անունով: Եւ երբ Պողոսը նրանց վրայ ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ: Լեզուներ էին խօսում եւ մարգարէանում:»* (Գործք 19:6): Դարձյալ տեսնում ենք, որ լեզուների խոսելը միայն մի նպատակ ունի՝ Ավետարանը տարածել այդ լեզուներով:

Սրանք են միակ դեպքերը ուր լեզուների խոսելը արձանագրվել է Աստվածաշնչում: Բացի այս եւ Ա. Կորնթացիների հատվածից, ոչ մի այլ առաքելական թուղթ ոչ մի բան չի հիշատակում լեզուների մասին: Այդ պարզևր տրվեց միայն Օրենքի եւ Շնորհքի այդ միջանկյալ շրջանում: Հրաշքների պարզևները շարունակվեցին առաքելական դարում, երբ տակավին Նոր Կտակարանը գրվում էր հետագա սերունդների համար:

## 12. Լեզուներ խոսելը Այլ Հավատների Մեջ

Սուրբ Հոգին ներշնչում է լեզուների խոսակցությունը, ինչպէս Պողոս գրեց Կորնթացիներին առաջին իր նամակում 12:7-11, եւ ինչպէս տեսանք Գործք Առաքելոց գրքի մէջ:

Բայց լեզուների խոսակցությունը կարող է նաև լինել այլ կերպերով: Ոչ-քրիստոնյաներ հին ու նոր ժամանակներում, հանկարծ խոսել են լեզուներ: Մի քանի հին կրոններ իրենց մեջ ունեն լեզուներ խոսելու կարողությունը: Սա ոչ թե ամբողջական մի կազմակերպված լեզու

էր, այլ մի շարք վանկերից բաղկացած խոսքեր, որ կոչվում է հիացական խոսակցություն կամ եռանդագին խոսակցություն (ecstatic speech):<sup>4</sup>

Այս եռանդագին խոսակցությունների մասին հին Եգիպտոսից, Ք. Ա. տասնմեկերորդ դարից անգամ գրվածքներ գոյություն ունեն: Հելլենիստական Հունական աշխարհում Դելֆիի հեթանոս մարգարեուհիներն էլ Սիբիլյան քրմուհիները խոսում էին անհաղորդակցելի էլ անհասկանալի լեզվով: Նույնիսկ ավելին. Դիոնիսյան ծեսերը իրենց մեջ պարունակում էին դյուրիչ կամ վերացական հոգեվիճակ էլ եռանդագին խոսակցություններ: Նմանօրինակ երևույթներ կատարվում էին կախարդների էլ մոգերի կողմից առաջին դարում:<sup>5</sup>



Եռանդագին խոսելու մասին նկարագրականները առատ են համեմատական կրոնների մասին սերտելիս: Հին Հունաստանի Դելֆական էլ Պիդիական կրոնները, եռանդագին այդ խոսակցությունը էլ հոգեվիճակը մեկնաբանում էին որպես Ապոլոնի կողմից կատարված երկնային ներշնչում:<sup>6</sup>

Այս հին հեթանոսները ինչպե՞ս էին խոսում լեզուներով: Շատ հավանաբար այդ գերբնական կարողությունը ստանում էին դևերից, բայց նաև հավանաբար կատարում էին այդ բոլորը մարդկային կարողությամբ: Արդի գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ խարիզմատների մոտ լեզուների հասկացությունը գալիս է բնական մի աղբյուրից՝ մարդկային ուղեղից:

Ահա մի շարք հետազոտություններ.

«Լեզուներ խոսելու երևույթը կարելի է բացատրել հոգեբանական, ընկերային, կենսաբանական էլ լեզվաբանական հիմունքներով միայն...: Ընկերաբանության գիտնականները համընդհանուր համաձայն են, որ գլոսսոլալյան կամ լեզուների խոսակցությունը պատահում է այն խմբերի մեջ, երբ մի անձ մտնում է մտային շեղված տարօրինակ վիճակի մեջ...: Հոգեբաններ ցույց են տալիս, որ դա (լեզուների խոսելը) բացատրելի է ոչ անպայմանորեն գերբնական կամ հոգևոր եզրերով... Գլոսսոլալիստի (լեզուներ խոսողի) հոգեբանական վիճակը մի ձևով շեղված է»:<sup>7</sup>

«Գլոսսոլալյան սովորական իմաստով լեզու չէ... Այն կամեցողությամբ կատարված ձայնային արտահայտություն է, ուր կրոնական ուշադրություն գրավելու բնաբանում, լեզուն շարժվում է անձի կամքով ու տրամադրության ներքո, բայց անջատված նրա մտքից՝ ճիշդ այն ձևով որ երեխաներ ունեն իրենց քմահաճ լեզվախաղերի երևակայության

<sup>4</sup> Non-language syllables produced when the brain sends signals to the organs of speech (throat, tongue and lips) but the language center of the brain does not organize the signals. The person can be conscious or in a trancelike state.

<sup>5</sup> G.R. Osborne, in the *Evangelical Dictionary of Theology*, 1984, page 1100.

<sup>6</sup> C.M. Robeck, Jr., in *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, 1988, page 872.

<sup>7</sup> Klemet Preus, *Concordia Theological Quarterly*, Vol. 46, 1982, pages 280-281.

մեջ...: Գլոսսոլայյան ընդհանրապես ուսուցանում են եւ սովորում, եւ իրականում հեշտ է դա անելը եթե մարդ փափագի այն անել...»<sup>8</sup>

«Գլոսսոլայյան ուսուցանելի տաղանդ է, ինչքան էլ որ անգիտակցաբար կատարվի նրա մեխանիզմը: Այն առիթներով որ նա արտահայտվում է, մեծ չափով դա կախում ունի հատուկ մի կրոնական խմբի ակնկալիքներից, որ արտահայտվում է մասամբ ծիսականացված շարժումներից: Նույնիսկ մարմնական հատկանշական շարժումները, նրա հետևող մտային անջատումը եւ ձայների հնչողական կազմավորումների երևույթները, հատկանշվում են հատուկ մի խմբի, եւ նույնիսկ այդ խմբի ղեկավարին՝ որ «սովորեցրել» է գլոսսոլալիստին: Իսկ գլոսսոլայյայի մեկնաբանությունը միշտ կախում ունի այդ խմբի հավատքի կամ դավանության սիստեմից»:<sup>9</sup>

Էկստատիկ կամ հիացական խոսակցությունը, նույնիսկ երբ դիտարկվի որպես անբնական՝ դա մի բնական կարողություն է, որ կարելի է սովորել: Լեզուներով «խոսել»ը հրաշք չէ եւ չի կարող փաստ լինել Սուրբ Հոգու ներկայության: Կորնթացի քրիստոնյաները կարծում էին որ այլ լեզուների խոսակցությունը ինչ որ մի գերբնական ներշնչումի փաստ էր: Սակայն, Պողոս Առաքյալի գրած ձևից եզրակացնում ենք, որ մի խումբ Կորնթացի քրիստոնյաներ իսկապես ստացած էին օտար լեզուներով խոսելու հոգևոր պարզևը, սակայն մյուսները կապկում էին նրանց ստացած պարզևը: Կորնթացիներից մի քանիսը շեշտում էին, որ լեզուներ խոսելը ակնհայտ ապացույց էր հոգևորության, շատ հավանաբար ազդված այն ժամանակ հեթանոս կրոնների կողմից հիացական խոսակցության տրված կարևորությունից: Դա անելով նրանք անտեսում էին Քրիստոնեության ավելի կարևոր ուսուցումները, ինչպես սերը: «*Եղբայրներ՛ր, մտքով երեխայ մի եղէք*» ասում է Պողոս Առաքյալը (Ա. Կորն. 14:20): Պողոս նկատի չուներ՝ թե լեզուներ խոսելը երեխայություն է, այլ երեխայություն էր լեզուներ խոսելու Կորնթացիների անհագ պնդումը: Պողոս մեջբերում է Եսայի Մարգարեի 28-րդ գլխի 11 եւ 12-րդ համարները, որպեսզի ցույց տա թե օտար լեզուներով խոսելը միշտ էլ ազդեցիկ միջոց չէր մարդկանց մոտեցնելու Աստծուն:

Պողոս ուղղում է նրանց մտածելակերպը, որպեսզի օգնի նրանց, որ ավելի լավ ուղի որդեգրեն: Նախ, նա հիշեցնում է Կորնթացիներին նրանց հեթանոս անցյալը (Ա. Կորն. 12:2), եւ սաստիկ օրինակ է տալիս, որ ցույց տա թե ամեն խոսք Աստծո կողմից ներշնչված չէ (համար 3): Պատգամները ընդունվելուց առաջ պետք է որ ստուգվեն (Ա. Կորն. 14:29, Ա. Թեսալ. 5:20-21): Աստված ոչ մի պատգամ չի ներշնչում, որ հակասում է Իր տված պատվիրաններին կամ սիրո ճանապարհին: Եւ քանի որ պատգամները պետք է ստուգվեին, նրանք նաև պետք է հասկացվեին: Դրա համար Պողոս ասում է որ եթե թարգմանիչ չկա՝ լեզուների պարզևը անծնական օգտագործման համար է պահվում (Ա. Կորն. 14:28):

Լեզուները անհավատների համար հրաշք էր. այն անձանց համար՝ ովքեր դեռևս Աստծուն չէին հավատում եւ փնտրում էին ապացույցներ (Ա. Կորն. 14:22): Բայց եթե հեթանոսներ կամ օտարներ եկեղեցի հավաքվեն ու տեսնեն ամեն մարդ որ միաժամանակ օտար լեզուներով հրաշալի խոսում են՝ նրանք կարող է ծաղրի առարկա դարձնեին խոսողներին, ասելով որ սրանք հարբած են, խենթ են եւ կամ դևերի տիրապետության տակ են (Ա. Կորն. 14:23 եւ Գործք 2:13): Կարո՞ղ էք երևակայել, եթե որևէ մահմեդական պատահամբ գնա եւ տեսնի հոգեգալստականների խմբային աղմկող, հատակին տապալտկող

<sup>8</sup> J.I. Packer, *Churchman*, Vol. 94, 1980, pages 108-109.

<sup>9</sup> Wayne A. Meeks, *The First Urban Christians: The Social World of the Apostle Paul*, 1983, page 120.

գիժությունները, նա սարսափած իր Ալլահին փառք կտա, որ իրեն անսասան պահի իր Իսլամական հավատքի մեջ՝ հեռու պահելով այդ տեսակի «քրիստոնյաներից»:

Լեզուները, որպես հրաշք, մարդկանց չեն առաջնորդում մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հավատքի հնազանդության եւ աճման: Հավատավոր քրիստոնյաներ, որ արդեն իսկ հավատքի մեջ են, պետք չունեն այս տեսակ **«շուռ» ելույթների** (ցուցադրական երևույթ), եւ ավելի հարկավոր փոփոխություններ են պետք մարդու սրտում ու հոգում՝ այն փոփոխության որ կը կոչվի ՍԵՐ: Հոգեգալստականների կողմից լեզուների խոսելը կարող է անհատապես կամ խմբային կերպով մղված լինի: Բայց, նա կարող է նաև Սատանայի կողմից մղված լինի...:

### 13. Առաջին Կորնթացիների 13րդ Գլուխ

Հիմա գալիս ենք այն հարցին թե. **«Լեզուների պարզևը ներկայիս արդյոք Աստծո ծրագրի մի մասն է եկեղեցու համար»:** Աստված իր պարզևները տալիս է ում որ կամենա, եւ նրա տված պարզևների ցանկում չի մտնում մեր անտեղի պնդումը, որ լեզուների խոսակցություն անպայման պետք է լինի եկեղեցում ամեն հավատացող մկրտվողի կողմից: Դրանից ավելի կարեւոր նյութ կա որ անտեսել չի կարելի եւ հրամայական է ամեն քրիստոնյայի համար:

Դառնում ենք Առաջին Կորնթացիներին գրված նամակի 13-րդ գլխին: Հիշենք որ՝ գլխավոր նյութը դրանից առաջ ու հետո եկող՝ 12-րդ եւ 14-րդ գլուխներում է, ուր հոգևոր պարզևների հարցն է շոշափվում, որովհետև լեզուների հարցը այն պարզևն էր, որ բավականին չարաշահվում էր Կորնթացիների կողմից:

*«Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ զօղանջում են: <sup>2</sup>Եւ եթէ մարգարէութիւն անելու շնորհ ունենամ եւ հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: <sup>3</sup>Եւ եթէ իմ ամբողջ ունեցուածքը տամ աղքատներին եւ իմ այս մարմինը մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենայ: <sup>4</sup>Մէրը համբերող է, քաղցրաբարոյ է: սէրը չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի գոռոզանում, <sup>5</sup>անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտռում, բարկութեամբ չի գրգռում, չար բան չի խորհում, <sup>6</sup>անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ: <sup>7</sup>ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում, ամէն բանի համբերում: <sup>8</sup>Մէրը երբեք չի անհետանում: Թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան: Թէ լեզուներ՝ պիտի լռեն: Թէ գիտութիւն՝ պիտի անցնի: <sup>9</sup>Քանզի շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում: <sup>10</sup>Իսկ երբ գայ կատարեալը, շատից քիչը կ'անհետանայ: <sup>11</sup>Մինչ երեխայ էի, խօսում էի ինչպէս երեխայ, խորհում էի ինչպէս երեխայ, դատում էի ինչպէս երեխայ:*



*իսկ երբ տղամարդ դարձայ, երեխայական բաները մի կողմ թողեցի: <sup>12</sup>Այժմ տեսնում ենք աղօտ, ինչպէս պատկերը հայելու մէջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դէմառդէմ: Այժմ չատից քիչը գիտեմ, իսկ այն ժամանակ կը գիտենամ՝ ինչպէս որ Նա ճանաչեց ինձ: <sup>13</sup>Բայց արդ, մնում են հաւատ, յոյս, սէր. սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծագոյնը սէրն է:»*

12-րդ գլուխը ավարտվում է «լեզուներ»ով (12:30) եւ 13-րդ գլուխը սկսում է «լեզուներ»ով (13:1): Կորնթացիների վարքը հայտնի էր բոլորին, որ նրանք Սուրբ Հոգու մեծագույն պարգևը՝ սերը չունեին: Եւ 13-րդ գլխում Առաքյալը կենտրոնանում է այս կարևոր պարգևի վրա, որը բացարձակապէս գերազանցում է մյուս բոլոր պարգևներին առանց որի՝ քրիստոնյան պարգապէս ոչինչ է:

Կորնթացիներին մեջ վեճ եւ բաժանում կար, ու նրանց մեջ պակասում էր սերը որ Հոգու պարգևն է: Ուրեմն Պողոս գրում է. *«Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղօղանջում են:» (Ա. Կորն. 13:1):* Կորնթոսի մեջ այս աղմուկը այնքան բարձրացավ, որ պարգևի բուն իմաստը կորավ, հպարտ ու մարմնավոր պայքարներին տեղի տալով: Նույնիսկ այսօր, մի տեսակ հոգևոր հպարտության զգացում կա այս տեսակ լեզուներ խոսելու կապակցությամբ: Երբ որևէ քրիստոնյա ուզենա ցուցադրել Աստծո կողմից իրեն տրված որևիցէ պարգև՝ հպարտություն է ցույց տալիս, չարաշահում է իր պարգևը եւ սիրո պակաս ունի: Եւ ուր որ պակասում է սերը՝ այնտեղ որևէ պարգևների ընդունումը անարժեք ու անիմաստ է դառնում:

Եթե որևէ քրիստոնյա Առաջին Կորնթացիների բնաբանում լրջորեն քննարկի լեզուների ուսուցման մասին՝ նրանք չեն կարող չնկատել որ լեզուների խոսելը պիտի դադարի: Պողոս գրում է. *«Սէրը երբեք չի անհետանում. թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան. թէ լեզուներ՝ պիտի լռեն. թէ գիտութիւն՝ պիտի անցնի» (13:8):* Սիրո պահանջքը միշտ էլ լինելու է, ուրեմն սերը ընդմիշտ պիտի լինի: Ու երբ Աստվածաշնչի կանոնը կատարյալ կամ ամբողջական է լինում, այլևս նոր հայտություններ չեն լինում Աստծուց. ո՛չ կանխագուշակված մարգարեությամբ, ո՛չ էլ մարգարեությունից հետո եղող երկնքից հայտնված գիտությամբ: «Մարգարեության» եւ «գիտության» պարգևները բոլորովին անարժեք են դառնում, Աստվածաշնչի գրքերի ամբողջական կանոնականացումով:

Իսկ լեզուների մասի՞ն: *«լեզուները պիտի լռեն»*, Հունարենով «պատյոյ». այսինքն նրանք լրիվ պիտի դադարեն, և ո՞վ նրանց կարիքն ունի, միայն հավատքի չուսանած մարմնավոր երեխաները, որովհետև Պողոսն ավելացնում է. *«Մինչ երեխայ էի, խօսում էի ինչպէս երեխայ, խորհում էի ինչպէս երեխայ, դատում էի ինչպէս երեխայ. իսկ երբ տղամարդ դարձայ, երեխայական բաները մի կողմ թողեցի:» (13:11):* «խոսում էի» բառը իր բնագրի մեջ՝ լեզուներ խոսելու մասին է գրված: Հետևաբար, Պողոս երբ Աստծո հայտնություններով հասավ իր քրիստոնեական հասունացման, նա այլևս լեզուների կարիքը չէր զգում, ու նույն բնաբանի մեջ նա հանդիմանում է Կորնթացիներին լեզուների այդ հարցով. *«Եղբայրներ, մտքով երեխայ մի եղէք, այլ եղէք երեխայ չարութիւն գործելու մէջ, բայց մտքով եղէք չափահաս» (14:20):* Նույն փորձառությամբ, լեզուները մարում են, երբ քրիստոնյան հասունանում է Աստծո խոսքով, մինչ լեզուները երեխաների խոսակցություն են:

## 14. Ուրեմն Ի՞նչի Համար Խոսեցին Լեզուներով

## Ա. Ավետարանի պատգամը փոխանցելու համար

Անշեղ հստակությամբ Պողոս գրում է. «Ապա ուրեմն, լեզուները նշան են. բայց ոչ հաւատացեալների, այլ՝ անհաւատների համար. իսկ մարգարէութիւնը ոչ թէ անհաւատների համար է, այլ՝ հաւատացեալների:» (Ա. Կորն. 14:22):

Նշան բառը (Հունարենով «սեմեյոն») Նոր Կտակարանում առընչված է անհավատներին աստվածային մի պատգամ հաղորդելու հետ, եւ այս է շեշտը Հովհաննես 20:30-31 համարներում, ուր կարդում ենք. «Իր աշակերտների առաջ Յիսուս բազում այլ նշաններ էլ արեց, որոնք այս գրքում գրուած չեն: Այլ այսքանը գրուեց, որ դուք հաւատաք, թէ Յիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին. նաեւ՝ որպէսզի հաւատաք ու նրա անունով յաւիտենական կեանքն ընդունէք: » Նշանները, այսինքն հրաշքները երբեք չեն կատարվել առանց պատճառների, այլ որպէսզի տվյալ աստվածային պատգամը հաղորդեն:



Լեզուների իրական պաշտոնը «նշան է անհավատների համար»: Երբ անհավատներ ներկա չեն ու պարզև գործածվում է, դա նշանակում է՝ որ պարզև չարաշահվում է իր նպատակից տարբեր իմաստով: Այդ պարզև երբեք չի տրվել ստացող անծի ինքնահաճեցման կամ ինքնափառաբանության համար: Շնորհը ստացող անծը դա ստացել է պարզապես որպես պարզև, որի միջոցով Աստված պիտի հայտնէր իր պատգամները անհավատներին:

Կորնթացիների եկեղեցում, լեզուների մասին առաջացած չարաշահումների եւ եղծումների պատճառով էր, որ Պողոս հայտնում է լեզուների բուն նպատակը: Կորնթացիների

հոգևոր տեսությունը պատճառ դարձավ Պողոսի կողմից տրված հոգևոր դաստիարակության, ու նա «լեզուների» մասին իր ճառում ասում է. «Եղբայրներ, մտքով երեխայ մի եղէք, այլ եղէք երեխայ չարութիւն գործելու մէջ, բայց մտքով եղէք չափահաս:» (Ա. Կորն. 14:20): Հունարեն «մարդոց» բառը, (թելեյոս), կնշանակի հասուն կամ չափահաս: Նրանք, իրենց լեզուներ խոսելու չարաշահումով, ցույց էին տալիս իրենց անչափահասությունը. մի վարքագիծ՝ որը վարակում էր Կորնթոսի ողջ հավատացյալներին: Առաքյալը նրանց հիշեցնում է որ նրանք Քրիստոսի մեջ «երեխա էին մնում»: «Իբրեւ մանուկներ ի Քրիստոս կաթ տուեցի ձեզ եւ ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ չէիք. եւ հիմա էլ կարող չէք, քանզի դեռ մարմնաւոր էք:» (Ա. Կորն. 3:1):

Նրանց հոգևոր աճման ձախողությունը պատճառ էր հանդիսանում, որ նրանք Սուրբ Գրքերը չսերտեին: Երբայցիներին ուղղված նամակը շեշտում է այս կետը. «Հակառակ այն բանի, որ դուք ժամանակի ընթացքում ուսուցիչներ պէտք է լինէիք, բայց ահա հարկաւոր է, որ դուք սովորէք, թէ ինչ են Աստծու պատգամի նախատարրերը. եւ դուք կաթի կարիք ունէք եւ ոչ թէ պինդ կերակրի. քանի որ, ով կաթնակեր է, անգիտակ է արդարութեան խօսքին, քանզի երեխայ է. իսկ պինդ կերակուրը հասուն մարդկանց համար է, որոնց զգայարանները, քանի որ նրանք չափահաս են, վարժ են լաւը եւ վատը որոշելու մէջ:» (Եբր. 5:12-14): Իսկ Պետրոս Առաքյալը գրում է. «որպէս նորածին երեխաներ, մի՛շտ փափագող եղէք բանական եւ անխարդախ կաթին, որպէսզի նրա միջոցով աճէք

*փրկութեան համար»:* (Ա. Պետ. 2:2): Երբ Աստծո խոսքի սերտողությունը անտեսվում է, այն ժամանակ մարդ հայտնվում է հոգևոր շփոթության եւ չարը կատարելու արտոնության ճանապարհին:

## **Բ. Ավետարանի պատգամը հաստատելու համար**

Լեզուները միայն հաղորդակցվելու նշան չէին, այլ հաստատման նշան: Երբ առաքյալները գործածում էին լեզվի շնորհքը, այդ անում էին որովհետև նրանք չունեին ինչ ունենք մենք այսօր, Աստծո վերջնական եւ ամբողջական հայտնությունը եւ լիիրավ խոսքը եղող **Նոր Կտակարանը**: Աստվածաշունչը դեռևս կանոնականացված չէր, գրված Նոր Կտակարան չկար, ու նույնիսկ Պողոս չէր կանչված իր առաքելական կարգին: Հետևաբար, երբ առաքյալները ու իրենց հետևորդները գնացին բերանացի քարոզելու Ավետարանը՝ նրանց պատգամը լեզուների միջոցով հաստատվում էր հեթանոսների մեջ: Լեզուների խոսելը հաղթել էր տալիս ե՛ւ պատգամին, ե՛ւ պատգամաբերին: *«Սակայն ձեզանում առաքելի նշաններ գործուեցին ամենայն համբերութեամբ՝ նշաններով, սքանչելիքներով եւ գորութիւններով:»* (Բ. Կորն. 12:12): Եթէ համարենք որ Հիսուսի առաքյալներից մեկը այսօր ապրում է, երբ տեսներ մարմնով հարուցյալ Հիսուսին, նա պիտի չգործածեր նշանի պարզև, որովհետև նա պիտի ունենար մեր այսօրվա ունեցած Նոր Կտակարանը՝ ինչ որ Պետրոս, Պողոս եւ Հովհաննես չունեին այն ժամանակ որպես ամբողջական Աստծո խոսքը: **Երբ այսօր ունենք Աստծո խոսք՝ Աստվածաշունչը, մենք կարիքը չունենք հրաշքներ տեսնելու եւ հաստատելու Աստծո պատգամը:**

Նշանները կամ հրաշքները հեթանոսներից ավելի հրեաներն էին պահանջում: *«Իսկ որովհետև հրեաները նշան են հայցում, եւ հեթանոսները իմաստութիւն են փնտռում»* (Ա. Կորն. 1:22), հրեաներն էին որ անդադար նշան էին ուզում տեսնել *«Վարդապե՛տ, քեզնից մի նշան ենք կամենում տեսնել:»* (Մատթ. 12:38): Դարձյալ. *«Փարիսեցիներն ու սադուկեցիները մօտեցան ու փորձելով՝ նրանից ուզում էին, որ ցոյց տայ իրենց երկնային մի նշան:»* (Մատթ. 16:1): *«Հրեաները նրան ասացին. «Ի՞նչ նշան ցոյց կը տաս մեզ, թէ իրաւունք ունես այդ բանն անելու:»* (Հովհ. 2:18): *«Նրան ասացին. «Ի՞նչ նշան կ'անես, որ տեսնենք եւ հաւատանք, ի՞նչ գործ կը գործես:»* (Հովհ. 6:30): Բոլոր այս պարագաներում նշան խնդրողներն հրեաներ էին, եւ նրանց պնդումը հրաշքների համար պիտի լիներ նրանց ցավալի վախճանը:

Մենք որ Քրիստոսի ենք պատկանում, չհավատացող հրեաների նման նշանների ետևից չենք ընկնում: Մենք Տիրոջ պատկանող



հավատացողներս ունենք Աստվածաշունչը, ուրեմն. *«Հաւատով ենք ընթանում եւ ոչ թէ երեւոյթների վրայ հիմնուած»* (Բ. Կորն. 5:7): Ամեն անգամ երբ լեզուների հրաշքը

կատարվում էր՝ հրեաներ ներկա էին. որպեսզի հրաշքով տրված նոր լեզուներով կարող լինեին Ավետարանը տարածելու եւ չհավատացող հրեաներին ցույց տալու՝ որ **նույնիսկ հեթանոսները արժանի էին փրկության եւ Ավետարանը ունենալու իրենց լեզուներով**: Այդ բոլորը հաստատվում են Գործք Առաքելոց 10:45 եւ 19:6 համարներով: *«Իսկ նրանք ելան ու քարոզեցին Աւետարանը ամբողջ աշխարհում՝ Տիրոջ գործակցութեամբ. եւ իրենց ուղեկցող բոլոր նշաններով հաստատում էին Խօսքը:»* (Մարկոս 16:20):

Եթե որևէ անձ այսօր ուրանում է Աստծո գրված խոսքի պատգամները, Աստվածաշնչից դուրս ուրիշ դատարան չունի դիմելու: Առաքյալների օրոք, երբ դեռևս Նոր Կտակարանը տակավին չկար, Սուրբ Հոգին նրանց թիկունք կանգնեց եւ հաստատեց ճշմարտությունը, նրանց պատգամներին ուղեկցող նշաններով: Եւ երբ այդ սուրբ եւ ներշնչված մարդիկ ավարտեցին Նոր Կտակարանի գրությունը՝ այդ տեսակ հաստատումներ այլևս պետք չէին:

Նոր Կտակարանի մի հատկանշական հատված որ հաստատում է վերոնշյալ բոլոր փաստերին, եւ ավելացնում թե նշանները տրվել են Ավետարանը հաստատելու համար, հետևյալն է. *«մենք ինչպէ՞ս պիտի ազատուենք, եթէ անհոգ գտնուենք այնպիսի փրկութեան հանդէպ, որ նախ հռչակուեց Տիրոջ կողմից եւ ապա հաստատուեց մեզ համար նրանց միջոցով, որ լսել էին այն. Աստուած էլ այն վկայեց նշաններով, զօրաւոր գործերով, ամէն տեսակ զօրութիւններով եւ Սուրբ Հոգու շնորհներով, որոնք արուեցին իր կամքի համաձայն:»* (Եբր. 2:3-4): Եբրայեցիներին գրված նամակը, որ գրվել է 63 եւ 70 թվականների միջև, իր գրածով փաստում է եւ հստակացնում, որ այն սերունդը ում ձեռքով Ավետարանի պատգամը պետք է հաստատվեր հրաշքներով եւ նշաններով՝ նրանք էին ովքեր անմիջապես հաջորդեցին Տիրոջ մահվան եւ հարության դեպքերին:

## 15. Ի՞նչի Համար Սխալ է Լեզուներ Խոսելը

Մարդ պետք է քննարկի Պողոս Առաքյալի ներածականը հոգևոր նյութերի շուրջ, եւ սա միակ տեղն է ամբողջ Աստվածաշնչում ուր Հոգևոր պարզանքների մասին է խոսվում: Առաքյալը գրում է. *«Գալով հոգեւոր շնորհներին, եղբայրներ՛ր, չեմ ուզում, որ չգիտենաք:»* (Ա. Կորն. 12:1): Հայերեն թարգմանությունը ասում է **«շնորհներ»**. Անգլերեն թարգմանությունը գրում է **«պարզանքներ»**. մինչ Հունարենը չունի «պարզանքներ» կամ «շնորհներ» բառը, որովհետև բնագիրը միայն ասում է **«Փերի տե թոն նումատիկոն»**: Այսինքն «պարզանք» բառը չկա այնտեղ ու դրված է թարգմանիչների կողմից որպես օժանդակ գոյական: Պողոս Կորնթացիներին բառացի ասում էր. *«Չեմ ուզում որ անգիտակ լինէք հոգեւոր (նիւթերին) մասին»*, անշուշտ նկատի ունենալով հոգևոր պարզանքները:

Կորնթացիները անգիտակ չէին հոգևոր պարզանքների գոյության մասին, որովհետև առաքյալը նրանց ասել էր. *«Դուք պակաս չլինէք եւ ոչ մի շնորհից»* (Ա. Կորն. 1:7): Երբ Պողոս նրանց ասում էր. *«չեմ ուզում, որ չգիտենաք:»*, նա չէր խոսում նրանց պարզանքների անտեղյակության մասին, այլ պարզանքների կիրառման ուղիղ ձևի մասին: Նրանք լավ գիտեին թե ինչ էին հոգևոր պարզանքները, բայց անգիտակ էին պարզանքների ճիշդ օգտագործելու ձևերը, ինչպես ապացուցվում է նրանց գործածության ընթացքում թույլ տրված սխալները:

Նախքան պարզևների մասին քննարկման անցնելը, Պողոս նրանց հիշեցնում է թե որքան հեշտությամբ մոլորված էին. «Գիտէք, որ, մինչ հեթանոսներ էիք, ինչպէ՛ս էիք գնու- գալիս անխօս կուռքերի մօտ:» (Ա. Կորն. 12:2): Ըստ էության նա ասում է. «Նախքան ինձ ասեք ձեր ունեցած փորձառությունների մասին, թույլ տվեք ձեզ հիշեցնեմ ձեր հոգևորության չգոյության մասին, եւ ուստի անկարող էք զանազանելու Սուրբ Հոգու եւ դևերի միջև». «Իսկ հոգեւոր մարդը քննուժ է ամէն ինչ. եւ ինքը ոչ ոքից չի քննուժ: » (Ա. Կորն. 2:15): Որովհետև նրանք մարմնավոր էին, «մանուկներ ի Քրիստոս» (3:1), պարզևների նրանց կիրառումը ինքնամուղ էր մարմնավոր գորությամբ, եւ ոչ Սուրբ Հոգով: Բազմաթիվ քրիստոնյաներ իրենց տրված պարզևները ճիշդ չեն օգտագործում, եւ հետևաբար նրանց գործերը Աստծո խոսքի հետ համընթաց չեն: Որևէ անձ կարող է իր պարզևները սխալ օգտագործել:

#### **Ա. Լեզուներ խոսելը Սուրբ Հոգու մկրտության նույնանիշ չէ:**

Հակա-Սուրբգրային ուսուցում է այն վարկածը թե այն անձը որ մկրտվում է Սուրբ Հոգով, անպայման լեզուներ պիտի խոսի: Աստվածաշունչը հստակորեն հայտնում է թե, բոլոր մկրտված եւ փրկված անձերը ստանում են Սուրբ Հոգու մկրտությունը: «Քանզի մէկ Հոգով մէկ մարմին լինելու համար մկրտուեցինք մենք ամէնքս՝ թէ՛ հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ազատներ. եւ բոլորս էլ այդ մէկ Հոգին խմեցինք:» (Ա. Կորն. 12:13): Կորնթոսի բոլոր հավատացյալները Սուրբ Հոգու մկրտությունը ստացան, բայց բոլորը լեզուներ չէին խոսում: Թիվ 30 համարում գրված հարցը թե. «միթէ բոլորն էլ լեզուներ են խօսում» այնպես է շարադրված, որ տրամաբանական միայն մի պատասխան կարող է ունենալ՝ «ՈՉ»:

Սուրբ Հոգու մկրտության գործը մի պարզ փորձառություն չէ հավատացյալի փրկության կյանքում, այլ դա այն հրաշալի արարքն է երբ Սուրբ Հոգին դարձի եկող մեղավորին կապում է Քրիստոսի Մարմնին: Բացարձակ ճշմարտությունը այն է, որ ոչ մի այլ ճանապարհ չկա Քրիստոսի Մարմնին միանալու, այսինքն Սուրբ Եկեղեցուն անդամագրվելու: Ամեն փրկյալ, փրկվող եւ փրկության ճամփին եղող անձ մկրտվեց Սուրբ Հոգով, բայց ամեն մկրտվող անձ լեզուներ չի խոսում: Հոգու մկրտությունը անձը տեղադրում է Քրիստոսի Մարմնի մեջ:

Զգույշ պետք է լինել չչփոթելու Սուրբ Հոգու մկրտությունը հետևյալ պատվիրանի հետ. «լցուեցէք Հոգով» (Եփես. 5:18): Բոլոր հավատացյալները համաձայն են այս կետի շուրջ՝ որ աղոթք է նշանակում, Քրիստոսի միանալ է նշանակում: Մկրտությունը միայն մեկ անգամվա համար կատարվող խորհուրդ է Սուրբ Հոգով, բայց մարդ կարող է բազմաթիվ անգամներ լցվել Սուրբ Հոգով: Պողոս ասեց, որ Կորնթոսի բոլոր քրիստոնյաները չէին, որ լեզուներ էին խոսում (Ա. Կորն. 14:5), միաժամանակ նա հստակ ասեց, որ բոլորը մկրտվել էին Սուրբ Հոգով (Ա. Կորն. 12:13):

#### **Բ. Լեզուներ խոսելը ապացույց չէ Սուրբ Հոգով լցվելուն:**

Բոլոր հավատացյալները պատվեր ունեն «հոգով լցուելու» կամ նրանով շարժվելու (Եփես. 5:18), բայց որևէ մի տեղ Աստվածաշունչը չի հրահանգում հավատացյալներին լեզուներով խոսելու: Հավատացյալը կարող է Սուրբ Հոգու ազդեցության տակ լինի ու լեզուներ չխոսի: Շատ դեպքերում առաքյալները Հոգով լցվեցին, բայց լեզուներով չխոսեցին: (Գործք 4:31 եւ 13:9-11): Հոգով լցվել նշանակում է հոգով շարժվել: Կարո՞ղ ենք ասել, որ հարյուր հազարավոր հավատքի հերոսներ, Աստծո մարդիկ եւ կանայք որոնք

եղել են աշխարհի լավագույն առաքյալները, սուրբերը, ճգնավորները, նահատակները, կույսերը, քարոզիչները, ուսուցիչները եւ Քրիստոսի Ավետարանի աստվածավախ ժողովուրդը Սուրբ Հոգով չէին լցված, քանի որ լեզուներ չէին խոսում... **անհնարին է:**

Ինչպե՞ս կարող ենք իմանալ երբ մարդը լցված է Սուրբ Հոգով: Տեսնենք հետևյալ առաքելական պատգամը, ուր հրահանգ է տրվում Հոգով լցվելու: *«Եւ մի՛ հարբէք գինով. դրա մէջ գեխութիւն կայ. այլ մանաւանդ լցուեցէք Հոգով,՝ որպէսզի խօսէք միմեանց հետ սաղմոսներով, օրհներգութիւններով եւ հոգեւոր երգերով, որպէսզի երգէք եւ ձեր սրտերում սաղմոս ասէք Տիրոջը:՝ 20 Գոհութի՛ւն յայտնեցէք ամէն ժամ ամէն ինչի համար Հօրը եւ Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով:՝ 21 Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով: » (Եփս. 5:18-21): Մի խոսքով, Հոգով լցվելու ապացույցը Քրիստոսի նմանությունն է, եւ Աստվածաշունչը մեզ երբեք չի ասում որ մեր Տէրը լեզուներ է խոսել այն ձևով որ հոգեգալստականներ խոսում են:*

#### **Գ. Լեզուներ խոսելը Սուրբ Հոգու պտուղը չէ:**

Սուրբ Հոգու պտուղները հետևանքն են Հոգով լցվելուն եւ նշված են հետևյալ կերպով. *«Իսկ Հոգու պտուղն այս է՝ սէր, խնդութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն. այսպիսի բաներին օրէնք չկայ:» (Գաղատացիներին 5:22-23):* Այն քրիստոնյան որ Հոգով լցված է, բացահայտում է իր հոգու բարի պտուղները, անկախ այն հանգամանքից որ լեզուներ խոսում է կամ ոչ: Ի դեպ, Եփեսացիներին եւ Գաղատացիներին գրված նամակներում, երբ Հոգու լեցունության մասին է խոսվում, լեզուներ խոսելը նույնիսկ մեկ անգամ չի հիշատակվել: Ավելին, Պողոսի կողմից պարզևների մասին հիշված ցանկում՝ որ համբարձած Տերը շնորհեց իր Եկեղեցուն, նշանով կամ հրաշքով եղած «պարզևները» չկան այդ ցանկում: *«Նա շնորհ տուեց ոմանց լինելու առաքեալներ, ոմանց՝ մարգարէներ, ոմանց՝ աւետարանիչներ, ոմանց՝ հովիւներ եւ ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտօնի կատարման մէջ, ի շինութիւն Քրիստոսի մարմնի, մինչեւ որ մենք բոլորս հասնենք հաւատի կատարեալ միութեանն ու Աստծու Որդու ճանաչմանը, կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը:» (Եփս. 4:11-13):*

Հոգևոր լինելը կապ չունի լեզուների հետ: Աստծո նպատակը Իր յուրաքանչյուր զավակի համար Սուրբ Հոգու կողմից ուղղորդումն է, ու այդ նպատակի մեջ լեզուներ խոսելը չի ընկնում: Որևէ քրիստոնյա որ լեզուներ չի խոսել կամ խոսում, պետք չէ մտածի որ ինք հոգևոր կյանքի մեջ չէ: Հոգևոր կյանքի բարձր որակը լավագույն ապացույցն է Սուրբ Հոգու պտուղներին եւ լեցունության: Հովհաննես Մկրտիչ **Սուրբ Հոգով լցված էր իր մոր արգանդից** (Ղուկ. 1:15). սակայն այդ Աստծո մարդը ոչ հրաշքներ գործեց եւ ոչ էլ լեզուներ խոսեց (Հովհ. 10:41): Բայց նա իր կյանքով այնքան նման էր Քրիստոսին՝ որ մարդիկ որոնք Քրիստոսը փնտրում էին, իրեն հարց էին տալիս. «Արդե՞ք դո՞ւ ես Քրիստոսը»:

#### **Դ. Լեզուներ խոսելը հավատքի ապացույց չէ:**

Ոչ թե միայն ապացույց չէ, այլ ընդհակառակը նրանք որ փափագում են նշաններ ու հրաշքներ եւ դրանց հետ կապված պարզևներ ունենալ՝ ցույց են տալիս իրենց հավատքի պակասը: Քրիստոնյան մեղանջում է երբ անձնական կյանքում Աստծուց հրաշքներ է հետապնդում կամ պահանջում: Ի՞նչ է Աստծո Խոսքը այս մասին. *«Ապա ուրեմն, լեզուները նշան են. բայց ոչ հաւատացեալների, այլ՝ անհաւատների համար» (Ա. Կորն. 14:22):* Ուրեմն տեսնում ենք թե Կորնթացիները հավատքով թույլ էին ու մինչև իսկ շատեր կասկածում էին իրենց հավատքով փրկության մասին: Այն մարդը, որ նշաններ կամ հրաշքներ է

հետապնդում, լինի դա լեզուների հրաշք կամ այլ հրաշք՝ հավատքով երեխա է, կամ նույնիսկ անհավատ:

Թովմասը՝ որ առանց տեսնելու չէր հավատում, լավ օրինակ է տկար հավատքով եղող անծի համար: Երբ մեր Տերը հարություն առավ մեռելներից, նա երևեցավ իր աշակերտներին. *«Իսկ Թովմասը՝ Տասներկուսից մէկը՝ Երկուորեակ կոչուածը, նրանց հետ չէր, երբ Յիսուս եկաւ: Միւս աշակերտները նրան ասացին, թէ՛ Տիրոջը տեսանք: Եւ նա նրանց ասաց. «Եթէ չտեսնեմ նրա ձեռքերի վրայ մեխերի նշանը եւ իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը նրա կողի մէջ չխրեմ, չեմ հաւատայ»:»* (Յովհ. 20:24-25): Թովմաս Կորնթացիներին նման էր՝ հավատքով տկար էր, եւ նշան (հրաշք) էր պահանջում տեսնել որ հավատար:

Ութ օրեր հետո, Տերը նորից երևեցավ նրանց. *«Ապա Թովմասին ասաց. «Բե՛ր քո մատները եւ դիր այտեղ ու տե՛ս իմ ձեռքերը. եւ բեր քո ձեռքը ու մտցրու իմ կողի մէջ. անհաւատ մի՛ եղիր, այլ՝ հաւատացեալ»:»* (Յովհ. 20:27): Թերահավատ Թովմասը նշան էր ուզում, հետևաբար մեր Տերը երևեցավ նրան որպեսզի իր աչքերով տեսներ ու հավատար, ու ասաց Թովմասին. *«Որովհետեւ դու ինձ տեսար, հաւատացիր. երանի՛ նրանց, որոնք չեն տեսել եւ սակայն կը հաւատան:»* (Յովհ. 20:29): Իսկական Առաքելական Քրիստոնյան այն մարդն է՝ որ սերտում է Աստվածաշունչը ու կյանքում հավատքով է առաջանում, եւ ոչ ամեն քայլափոխին պահանջում է հրաշք տեսնել կամ լսել հավատալու համար:

## Ե. Լեզուներ խոսելը կարևոր չէ:

Հայտնի է որ Կորնթոսում ամեն հավատացյալ լեզուներ չէր խոսում: Ինչո՞ւ. Առաքյալը գրում է. *«Թէեւ կան շնորհների զանազանութիւններ, բայց պարզեւող Հոգին նոյնն է: ...<sup>8</sup>Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք, միւսին՝ գիտութեան խօսք՝ նոյն Հոգուց, <sup>9</sup>միւսին՝ հաւատ՝ նոյն Հոգով, միւսին՝ բժշկումների շնորհ՝ նոյն Հոգով, <sup>10</sup>միւսին՝ զօրաւոր գործերի կարողութիւններ, միւսին՝ մարգարէութիւն, միւսին՝ հոգիները զանազանելու շնորհ, միւսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խօսելու շնորհ, միւսին՝ լեզուների թարգմանութեան շնորհ: <sup>11</sup>Բայց այս ամէնը միեւնոյն Հոգին է առաջացնում եւ բաժանում իւրաքանչիւրին՝ ինչպէս որ կամենում է:»* (Ա. Կորն. 12:4, 8-11):

Նկատի առեք *«ինչպէս որ կամենում է»* բառերը. ինչպէս որ **ՆԱ կամենում է**, եւ ոչ ինչպէս մենք ենք կամենում. *«ինչպէս որ (ՆԱ) կամեցաւ»* (12:18) եւ ոչ մենք: Պարզները տրվում են երկնային շնորհաբաշխությամբ, եւ սա է պատճառը որ ամեն քրիստոնյա չունի լեզուների պարզը: Սուրբ Հոգին բաշխում ու բաժանում է յուրաքանչյուր հավատացյալին ինչ պարզ կամ կամենում է: Մեզանից ոչ մեկը չի կարող ընտրել իր փափագած պարզը կամ տաղանդը: Սուրբ Հոգին պիտի չտա մեզ ինչ որ մեր քմահաճույքի պահաջքն է մեր աղոթած ձևով: Ու Աստծուն մի ասեք ինչ պարզ պիտի տա ձեզ, կամ չտա: Մենք միայն Մարմնի մասնիկներն ենք, եւ ոչ մի անդամ իրավունք չունի գլխին ասելու՝ թե ինչ պետք է անի:

Կորնթացիները նաև սխալվում էին լեզուների պարզը խնդրելու հարցով, որովհետև դա պարզների փոքրագույնն է: Ա. Կորնթացիներին 12-րդ գլխում, **երբ պարզները իրենց շարքով նշվում են երկու անգամ**, յուրաքանչյուր անգամ **«լեզուները» եւ նրանց «թարգմանությունը» վերջին տեղում են:** (12:8-11 եւ 28-30): Նկատի առեք ուշադրությամբ դրված կարգը այդ հատվածում, առաքյալի կողմից. *«Նախ... երկրորդ... երրորդ... ասպա...»* Սկսելով ամենակարևորից հասնելով մինչև անկարևորին, բոլորից փոքրագույնը

գալիս է ցանկի վերջում: Լեզուների վերջին տեղը լինելը նաև շեշտվում է Ա. Կորնթացիներին 14:1, 5, 6, 19 համարներում: Նորոթյա լեզուներ խոսացողների այս հերետիկոսությունը ուզում է ձեզ հավատացնել, որ այս լեզուներ ունենալու պարզևր միակ ու եզակին է որ յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ունենա: Կորնթացիները սխալվում էին, որ շեշտում էին լեզուների պարզևր որպես ամենակարևորն եւ պահանջվածը բոլորից: Նրանց համար լեզուները հմայքի ու համբավի խնդիր էր, դրա համար էլ չարաշահվում էր այդ եկեղեցում:

Պողոս Առաքյալ նրանց հորդորելով գրում է. «*Բայց դուք նախանձախնդիր եղէք լաւագոյն շնորհներին:*» (Ա. Կորն. 12:30): Նա չի գովաբանում կամ խրախուսում նրանց, ինչպես նրա հայրական հրամայական շեշտով տեսնում ենք. այլ նա մատնանշում է նրանց անձնասիրության փաստը: Մի մտքով նա ասում է. «*Դուք անձնասիրաբար փնտռում եք ավելի հանդիսական եւ ցուցադրական պարզևներ*» եւ «*գոհ չեք որ ոտք եք, գուլպայով ծածկված ու կոշիկի մեջ, դուք ուզում էք աչք լինեք, ուզում էք տեսնվել ու լսվել:*» Եւ ավելացնում է. «*ես առաւել լաւ ճանապարհ ցոյց կը տամ ձեզ:*» (Ա. Կորն. 12:31):

## 2. Լեզուներ խոսելը կանանց կողմից սխալ է:

«*Ինչպէս որ է Աստծու բոլոր եկեղեցիներում, կանայք թող լուռ մնան եկեղեցու մէջ, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպէս օրէնքն էլ ասում է:*» (14:34): Եթե լեզուներ խոսելը Սուրբ Հոգու պարզև է, ուրեմն պետք է տրվի **ԲՈՒՈՐ քրիստոնյաներին**, արու կամ էգ, երիտասարդ կամ տարեց: Բայց եթե Առաքյալի կողմից հրահանգ կա կանանց որ եկեղեցիներում լուռ մնան, ինչպես նաև ասվում է 35-րդ համարում, նույնիսկ դա անպատեհ անվանելով՝ ուրեմն ինչո՞ւ եւ ինչպե՞ս նորոթյա Հոգեգալստական հերետիկոս աղանդավորները, որոնց մեծամասնությունը արդեն իսկ կանայք են, կարող են լեզուներ խոսել: Նրանց արարքը հակասում է Աստվածաշնչի պատվիրաններին եւ եթե նրանք Աստվածաշնչին հետևող լինեին՝ պենտեկոստական եւ լեզուների շարժման աղանդի մեծ մասը արդեն գոյություն չէր ունենար:

Հոգեգալստական կանայք Աստվածաշնչի մեծագոյն պատվիրանագանցներն են եկեղեցիներում խոսելու հարցով: «*խոսել*» բառը 14:34-րդ համարում (լալեիս) նույն բառն է 28-րդ համարում (լալեիտո), հետևաբար չի կարող այլ իմաստ ունենալ որպես պարզ խոսակցություն՝ որ պիտի խանգարեր եկեղեցու արարողությանը: Լեզուների սխալ գործածության ու դրա վերացման վրա է կենտրոնացում այս բաժնում: Եւ եթե որևէ կին (կամ կնիկ) հարց ունի Պողոս Առաքյալի ասածների դեմ, նա միայն իր հետևյալ հարցով կարող է նրանց հերետիկոսությունը ուղղի. «*Միթէ ձեզնի՞ց ելաւ Աստծու խօսքը եւ կամ թէ միայն ձե՞զ հասաւ:*» <sup>37</sup> *Իսկ եթէ մէկը ինքն իրեն կարծում է մարգարէ կամ տէր՝ հոգեւոր շնորհի, թող իմանայ, թէ ինչ որ գրեցի ձեզ, Տիրոջ պատուիրաններն են:* <sup>38</sup> *Իսկ եթէ մէկն անգիտանայ դրանք, նա թող անտեսուի եկեղեցուց:*» (Ա. Կորն. 14:36-38): Կանանց համար սխալ է եկեղեցում խոսելը, էլ ուր մնաց լեզուներ խոսելին: «*Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածը ուսուցանի կամ էլ խօսքով իշխի տղամարդու վրայ, այլ թող լուռ մնայ:*» (Ա. Տիմ. 2:12):

Այս հատվածի եզրակացությունը այն է, որ կնոջ ծառայությունը չի տարածվում որպես իշխանություն մարդու վրա: Կանայք կարող են կանանց ու երեխաներին ուսուցանել եւ դաստիարակել, լինելով համեստ եւ հնազանդ:

## 16. Հոգեգալստականները Նշան Են Փնտռում

Հիսուս ասեց. «Մրանք են նշանները, որոնք պիտի ուղեկցեն նրանց, որոնք հաւատում են. իմ անուշով դեւեր պիտի հանեն, լեզուներ պիտի խօսեն, <sup>18</sup> իրենց ձեռքերին օձեր պիտի բռնեն, եւ եթէ մահացու թոյն խմեն, դա նրանց չպիտի վնասի. հիւանդների վրայ ձեռք պիտի դնեն եւ բժշկեն»:» (Մարկոս 16:17-18):




Որոշ մարդիկ այս համարներում հրահանգ կամ պատվիրան են հասկանում ու կարդում, կարծեք թե քրիստոնյաներ առաքված լինեին այդ բոլորը կատարելու, որպեսզի իրենց հավատքի վավերականությունն եւ զորությունը ցույց տան: Որոշ հոգեգալստականներ թունավոր օձեր են բռնում առանց վնասվելու: Մեծ մասամբ նրանք չեն խայթվում, բայց երբեմն խայթվում են ու մեռնում: Եղել են դեպքեր, երբ հավատավոր հոգեգալստականներ թունավոր օձեր են բռնել ու անմիջապես խայթվել: Ուրիշներ երկրորդ կամ երրորդ հարկից նետվել են իրենց հավատքը ցույց տալու համար ու մահացել են գետնին:

Հաջողության ցուցանիշները ոչ մի բան չեն ասում մեզ: Կարևորը այն է թե ինչո՞ւ Աստված «ուզում է» որ իր ժողովուրդը այդ բաները անեն:

Արդյո՞ք Աստված թույլ է տալիս որ այդ մարդիկ վտանգավոր բաներ անեն, իբր նրանց կարճ խելքով՝ Աստված նրանց օգնության պիտի հասնի, որպեսզի բոլորը տեսնեն որ Աստված նրանց կողմից է ու հաստատում է նրանց հիմար արարքները: Ասենք, օրինակի համար, ինչո՞ւ չեն նետվում օդանավից առանց անկարգելի (parachute), ու եթե թունավոր օձերի ձեռք տալ են սիրում, ինչո՞ւ չեն մտնում մի սենյակ որը լեցված է կոբրաներով կամ Ինդոնեզյական կոմոդո վիշապներով: Ինչո՞ւ համար ասենք, վառվող փուռի մեջ չեն նետվում որպեսզի Սեդրակ, Միսաք ու Աբեթնագովի նման հավատք ցույց տան...: Կամ ասենք, ինչո՞ւ Բրազիլիական բիրանա ձկների լիճը չեն նետվում: Արդյոք այդ տեսակի արարքնե՞ր են պետք, թե հրաշքներ են հարկավոր՝ որ ցույց տրվի թե Քրիստոնեությունը ճիշդ է:

Հավատքը հրաշքներ տեսնելուց չի ծնվում: Հին Եբրայեցիները երբ կտրեցին Կարմիր Ծովը Մովսեսի առաջնորդությամբ՝ զանազան հրաշքներ տեսան, բայց հավատք չունեին Աստծո հետևելու: Իսկ շատ քրիստոնյաներ՝ լինեն Հայ, Ղպտի, Հույն կամ Ասորի, Իտալացի, Հնդիկ թե Եթովպիացի, հավատացին առանց ավելորդ պակաս թատերական ելույթների: Օրինակ, վերցրեք մեր Հայաստանյայց Առաքելական



**Սուրբ Եկեղեցին**, երբ մենք դարերով տվեցինք անհամար ու անթիվ սուրբեր, նահատակներ, հայրապետներ, ճգնավորներ, հոգևորականներ, վարդապետներ, քահանաներ, սարկավագներ, քարոզիչներ, կույսեր, եւ հավատավոր ժողովուրդ՝ տարեցներ ու փոքրիկներ, որոնք իրենց սեփական աչքերով չտեսան Տերը, ու չտեսան հրաշքներ ամեն օր, չխոսեցին լեզուներ, ինչպէս հոգեգալստականներ աղանդավորաբար մեկնաբանում են, բայց երկաթյա հավատով մնացին Քրիստոսին հավատավոր, եւ ննջեցին կամ նահատակվեցին, իրենց արյամբ մկրտվելով ի Քրիստոս: Ի՞նչ է, նրանք Աստծո աչքին ընդունելի չէի՞ն: Հավատքը ծնվում է երբ Աստված արտոնում է մարդուն հետևել Իր սուրբ Ավետարանին (Հռոմ. 10:13-14 եւ Յովհ. 6:44): Գլխավոր հրաշքը կատարվում է սրտում եւ հոգում, ոչ անպայման տեսանելի աչքերով:



Նաև Աստված չի փափագում, որ մենք վտանգավոր գործեր կատարենք, որպեսզի նա ամեն ռոպե միջամտի ու մեզ ազատի: Սատանան փորձեց Հիսուսին նույն կերպով երբ նրան առաջարկեց Տաճարի տանիքից վար նետվել, ու Հիսուս պատասխանեց նրան. *«Գրուած է՝ քո Տէր Աստծուն պիտի չփորձես:»* (Մատթ. 4:7): Մենք չպետք փորձենք Աստծուն, որ մեզ համար ինչ որ հրաշք

կատարի: Այդ արարքները հավատքից չեն՝ այլ թերահավատությունից:

Մարկոս 16-րդ գլխի գրվածքը մի կանխագուշակում է, եւ ոչ թե պատվիրան: Պարզապես ասվում է, որ հազվադեպ թվով քրիստոնյաներ այդ տեսակի հրաշքներ պիտի տեսնեն, բայց դա համընդհանուր խոստում չէ որ բոլոր քրիստոնյաները պիտի պաշտպանվեն, կամ բժշկվեն, կամ լեզուներ խոսեն, կամ դևեր հանեն մարդկանց միջից: Համարը հայտնում է, որ զանազան հրաշքներ պիտի գործվեն՝ բայց չի ասում դրանց քանակի, տեղի կամ ժամանակի մասին:

Հրաշքներ գործվում են այսօր, երբ միլիոնավոր հիվանդներ պառկած հիվանդանոցներում կամ տներում, ունենում են Առաքելական, Կաթոլիկ կամ Ուղղափառ հոգևոր հովիվների այցելություն: Դևեր են հանվում մարդկանց տվայտող հոգիներից, քրիստոնյաներ հրաշքներով փրկվում են արկածներից: Սակայն լինում են դեպքեր, երբ նրանք չեն փրկվում մահից, բայց դա երբեք չի նշանակում որ մահացածները հավատք չունեին:


Քրիստոնեության ապացույցը հրաշքները չեն, այլ **Աստծո սերը, Քրիստոսի ճանապարհի վրա խաչը շալակելը եւ Սուրբ Հոգու պտուղները**, որոնք մեզ քաջալերում են **սիրել զԱստված եւ զմիմյանս**: (Հռոմ. 5:5, Գաղ. 5:22, Յովհ. 13:34-35, Հռոմ. 8:14, Գործք 5:32):

Մարդու արարչագործությունից մինչ օրս, Սատանայի գլխավոր ծրագիրը եղել ու մնում է խոչընդոտել Աստծո ու Եկեղեցու հավատացյալների միջև: Ներկա սերունդը ականատես է լինում աշխարհի տարածքում հարատև աճող, հրաշքների անունից սատանայական չար գործունեությանը: Երբ չարին չի հաջողվում Աստվածաշունչը մեզնից բաժանել, նա շատ է աշխատում որ մեզ բաժանի Աստվածաշունչից, ու նրան հաջողվում է մեր Եկեղեցու մարդկանց ու կանանց կենտրոնացումը գրավել գերբնական փորձառությունների վրա: Եւ դա անելով, այդ սատանայական փորձությունների հետևողները այլևս ժամանակ կամ տրամադրություն չեն ունենա քննարկելու Աստվածաշունչը եւ Աստծո տված ճշմարտությունները:

Սակայն Աստված ծրագիր ունի մարդկության համար, եւ այդ ծրագրի ծիրի մեջ անպայման չի ընկնում մարդկային պատմության յուրաքանչյուր դարաշրջանի մեջ անվերջ ու անընդհատ կրկնվող հրաշքների շարանը: Աստծո հրաշքները հազվադեպ երևույթներ են պատմության ընթացքում, Ենովքի մարմնով երկինք համբարձումից, մինչև երկնաքարերի կողմից աշխարհը կործանումից փրկող իր ամենօրյա չգրված ու չլսված հրաշքները:

Իմ ուսանողական տարիներին ու հետո, երբեմն հարց եմ տվել Աստվածաշունչի գանազան ուսուցիչների, դպրագետների, մասնագետների եւ հոգևորականների ու թարգմանիչների, որոնք Եբրայեցերենի ու Հունարենի կողքին, հրաշալի գիտեն Աստվածաշունչի գրվածքների մասին՝ եթե նրանք երբևիցե «լեզուներ խոսել» են: Նրանց մեջ եղել են եւ՝ Աստվածաշունչի եւ՝ աշխարհիկ քոլեջների ու համալսարանների նախագահներ ու ուսուցիչներ, եւ փայլուն մտքի տեր մարդիկ, ու մինչ օրս, նրանց մեջ նույնիսկ մի մարդ անգամ չեմ գտել, որ լեզուներով խոսելը պաշտպաներ: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Ավետարանական ու Բողոքական եկեղեցիների հոգևորականների ու հավատացյալների ջախջախիչ մեծ մասը չեն խոսում լեզուներով, ու նույնիսկ նրանք Հոգեգալստականներին աղանդ են համարում:

Իսկ արդյոք ես խոսե՞լ եմ լեզուներով.. Այո... Կյանքիս բոլոր տարիներին, պաշտելի Տերս ու ես շատ հանգիստ ու հրաշալի իրար հետ խոսել ենք մեր սուրբ ու ոսկեղեն **ՀԱՅԵՐԵՆՈՎ**, ու ինչու չէ, նաև արաբերենով ու անգլերենով: Ես խոսում եմ **Նրա հետ Հայերեն** եւ Նա լսում է ինձ ու հասկանում: Նա փոխադարձաբար իր Աստվածաշունչով, Ս. Պատարագով եւ աղոթագրքերով **ինձ հետ խոսում է Հայերեն** ու ես նրան շատ լավ եմ ըմբռնում ու հասկանում: Մեր Հայոց Աստվածաշունչը որ Ս. Սահակ Պարթևի, Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ նրանց սուրբ թարգմանիչ աշակերտների ջանքերով եղել է բոլոր լեզուների «**Թագուհի Թարգմանությանց**» դարերով եղել է մեր ազգի ու ժողովրդի պարծանքն ու գանձը, որով կարողացել ենք հասկանալ մեր սուրբ հավատքը եւ պահպանել Հայերեն սուրբ լեզուն, որ Սուրբ Հոգու պարզևն է եղել մեր Հայ ազգին:



Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Հայ հավատավոր ժողովուրդը **կարիքը չունի** նոր «Աստվածաշնչի», նոր «առաքյալների», նոր «հավատքով բուժողների», կամ նոր խարիզմատ շարժումների կամ նոր «հրաշագործ լեզու խոսողների» իրենց աղանդավոր ու հերետիկոս ճանապարհներով: Հայ Եկեղեցին միայն կարիքը ունի վերագտնելու իր Քրիստոնեական հավատքի արմատները, եւ Սուրբ Հոգու զորությամբ ու սիրով, քարոզելու եւ ապրելու մեր Սուրբ Պատարագը: Ամեն անգամ որ հաղորդվում ենք Տիրոջ մարմնին եւ արյանը, հավատքով վերստանում ենք մեր փրկության կյանքը, որովհետև. *«Ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արիւնը, յաւիտենական կեանք ունի. եւ ես նրան վերջին օրը յարույթիւն առնել պիտի տամ, քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնը՝ ճշմարիտ ըմպելիք:»* (Յովհ. 6:55-56): Իսկ Առաքյալը մեր բոլորին որպէս սրբություն հորդորում է. *«Քանի անգամ որ այս հացն ուտէք եւ այս բաժակը խմէք, պատմեցէ՛ք Տիրոջ մահը, մինչեւ որ նա գայ:»* (Ա. Կորն. 11:26):

Մենք որպէս Հայ ժողովուրդ, ոչ մի կարիք չունենք լեզուներ խոսելու կամ հրաշքներ տեսնելու, քանի որ մեր հայրերի սուրբ ճանապարհով անցած նույնիսկ մի շարական Ս. Մեսրոպ Մաշտոցից, կամ մի տաղ կամ ներբող Ս. Ներսես Շնորհալուօց, կամ մի անմահական աղոթք Ս. Գրիգոր Նարեկացուց՝ ինձ եւ մեր բոլորի համար **հազար անգամ ավելի թանկարժէք են**, քան բոլոր աշխարհի հավաքված Հոգեգալստականների աղանդավոր լեզվա-թատերական հիմարությունները եւ հավատքի չգոյությամբ նրանց արդիական ելույթներն եւ ճամարտակությունները:

**Հոգեգալստականների մեջ մոլորված իմ սիրելի եղբայրս ու քույրս.** հույսով եմ որ կարդացիր այս գիրքը անկողմնակալ սրտով ու մտքով, եւ լուսաբանվեցիր թե Հոգեգալստյան իրական պատգամը նշանների, հրաշքների, լեզուների, պարզների ցուցադրության մեջ չէ, այլ ինչպէս ասեց Պետրոս Առաքյալը այդ սուրբ օրը. *«Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը:»* (Գործք 2:38): Լեզուն շարժելը հրաշքների կարիքը չունի, այլ ապաշխարությամբ եւ խոնարհ հոգով սիրտը մեղքերից ձերբազատելը: Ով որ հավատում է՝ զոջում է իր մեղքերի համար եւ մկրտվելով ստանում է Սուրբ Հոգու պարգևը: Մնացած բոլորը Աստծու որոշումներն են իր տված պարզներով, եւ ոչ մի բան նրանից պահանջել հարկավոր չէ: Ոչ մի ոստոստողներ կամ խոսողներ կամ գոռացողներ կամ հատակին փռվող-տապալտկողներ պետք չեն քեզ:



Նայվածքդ ուղղիր պատմական, ճշմարտացի եւ լուսաշող Աստվածաշնչի հավատարիմ **Առաքելական Մայր Եկեղեցու** ուղիին: Ետ արի քո արմատներին եւ քո մոր գիրկը, որ թողեցիր ու գնացիր հետևեցիր օտար շահագործող աղանդավորների ետևից: Ետ արի քո **ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գիրկը**, որ սպասում է քո բարեբաստիկ եւ ուրախ վերադարձին: Եկ դեպի քո հարազատ մայրը բաց սրտով ու մտքով, ուրախ հոգով եւ

գիտությամբ՝ որ լեզուներ ունենալը կամ խոսելը Աստծո հրաշքների մեծագույնը չէ: Եկեղեցին պարզ մի հպանցիկ երևույթ չէ, հրաշքների «մենյու» (ճաշացուցակ) եւ ցուցադրական ճամարտակությունների ու բառերով լարախաղացների դաշտ չէ: Եկեղեցին Աստծո տունն է՝ իր Սուրբ Պատարագի եւ խորհուրդների հմայքով, սրբությամբ, մաքրությամբ, վեհությամբ, երկյուղածությամբ եւ աստվածպաշտությամբ:

Մեկ կողմ դիր երկրորդականը, անկարևորը, եւ քո վրա **վերջու կարևորը**, հրամայականը եւ փրկողը: Երեխայականն ու մանկականը նետիր ու դարձիր տղամարդ, հասուն Առաքելական քրիստոնյա, զինվոր եւ Աստծո սպառազինությունը կրող մարտիկ, որովհետև առաքյալները, սուրբերը, նահատակները, ճգնավորները, կույսերը եւ բոլոր հավատավոր նախկին ու գալիք սերունդները կարիքը չունեին երկրորդականին որովհետև ունեին առաջնայինը՝ **Աստծո ՍԵՐՈ**, եւ դրանով ընդունվեցին Աստծո հավիտենական Արքայության մեջ:

Վերջին խոսքը պատկանում է Տիրոջ. *«Եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, եւ նրանցից մէկը մոլորուի, իննսունինը ոչխարը լերան վրայ չի՞ թողնի ու գնայ որոնելու մոլորուածին: Եւ եթէ պատահի, որ այն գտնի, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ նրա վրայ աւելի կ'ուրախանայ, քան իննսունիննի վրայ, որ մոլորուած չեն:»* (Մատթ. 18:12-13):

Տ. Սերոբ Քահանա Ազարեան



## Բովանդակություն

Մուտք	էջ
1. Ի՞նչ է Պենտեկոստալիզմը կամ Հոգեգալստականությունը	էջ
2. Ո՞վ էր Չարլզ Պարհամը	
3. Ի՞նչ են Աստծո ժողովները Կամ Ասամբլյաները	
4. Ի՞նչ են Հոգեգալստականների Ուսուցումները	
5. Պողոս և Կորնթոսի Եկեղեցին	
6. Ի՞նչ է Նշանակում Լեզուներ Խոսել	
7. «Լեզուներ»ը Կորնթացիներին Գրված Ա. Նամակում	
8. Հրեշտակների Լեզուները	
9. Աստված Երբևիցե Լեզուներով Խոսե՞լ է	
10. Ի՞նչ է Սուրբ Հոգու «Մկրտությունը»	
11. Լեզուների Երեք Միակ Հիշատակումները	
12. Լեզուներ Խոսելը Այլ Հավատների Մեջ	
13. Առաջին Կորնթացիներին 13րդ Գլուխ	
14. Ուրեմն Ի՞նչի Համար Խոսեցին Լեզուներով	
15. Ի՞նչի Համար Սխալ է Լեզուներ Խոսելը	
16. Հոգեգալստականներ Նշան Են Փնտռում	
17. Վերջաբան	

## Հեղինակի Մասին

Տեր Սերոբ Քահանա Ազարեանը ծնվել է 1968-ին Քուվեյթում: Հաճախել է տեղի Հայ Ազգային Վարժարանն ու Ճեմարանը: ԱՄՆ տեղափոխվել է 1987-ին, և ութ տարիներ ծառայել է Ամերիկյան Բանակում: Իր բարձրագույն ուսումը նախ ստացել է Նյու Ջերզիի Montclair University-ում, եւ հետո Nazarene Bible College-ում Կալիֆորնիա, ուր և ստացել է Աստվածաբանության Պսակավորի իր տիտղոսը:



Եկեղեցու հանդեպ ունենալով համակ սեր ու նվիրում, ձեռնադրվել է որպես սարկավագ 1994-ին, եւ Քահանա՝ 1999-ին ձեռամբ Տ. Օշական Արք. Չոլոյանի, ծառայելով Միացյալ Նահանգների Արևելյան շրջանում:

2007-ին նա տեղափոխվել է ծառայության է անցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան Թեմում: 2011-ից ծառայում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Կանադայի Հայոց Թեմում: Ներկայումս ազատ վիճակով Քահանայ է եւ ծառայում է ուր որ հարկ լինի:

Իր բազմակողմանի տաղանդներով ծառայում է Ս. Եկեղեցու: Տեր Հայրը ունի բազմաթիվ աշխատություններ, դասախոսություններ եւ հոդվածներ, որոնք ունեն աստուածաբանական, եկեղեցական, ազգային, ընկերային եւ այլ տեսակի բնույթներ:

Հեղինակ է եւ թարգմանիչ գրքերի եւ դասախոսությունների՝ որոնցից են՝ Թալմուտական Հրեություն, Արձեռն Արարողակարգ Հայաստանեայց Եկեղեցու՝ եւ այլ գրքեր: Նաև Հայերեն գրական ասպարեզում ունի գրական տողեր, բանաստեղծություններ եւ արձակ էջեր: Իր թարգմանությունների շարքում հիշատակելի է Եկեղեցու Ս. Պատարագի ամբողջական արաբերեն թարգմանությունը: Իր մասնագիտության մեջ նա լավ տիրապետում է Աստուածաշնչի մանրակրկիտ սերտողության, Եկեղեցական եւ Ս. Պատարագի պատմության եւ դրանց հետ առընչվող տարբեր նյութերի՝ ինչպիսին են Աստուածաբանություն, ջատագովական եւ հայրաբանական գրականություն, նաև Հրեական եւ Իսլամական կրոնների պատմություն եւ այլն:

Տիրապետում է Անգլերեն եւ Արաբերեն լեզուներին: Ամուսնացած է Նաիրա Ազարյանի հետ եւ ունի մեկ երեխա: